



Ժողովրդավարական Հաստատությունների և Մարդու Իրավունքների
Գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2012թ. ՄԱՅԻՍԻ 6

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ



Վարչավա
2012թ. հունիսի 26

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ԱՄՓՈՓԱԳԻՐ	1
II.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ	5
III.	ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ.....	6
IV.	ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	6
V.	ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	8
VI.	ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ	11
VII.	ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ	15
VIII.	ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. 17	
IX.	ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ	23
X.	ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ	28
XI.	ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ	29
XII.	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ	34
XIII.	ՀԵՏ ԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ.....	39
XIV.	ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ	42
	ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	49
	ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՍԻՆ	51

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2012թ. ՄԱՅԻՍԻ 6
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ¹

I. ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության վարչապետի հրավերով, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը, Հայաստանում 2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների համար, 2012 թվականի մարտի 22-ին հաստատեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատել է ընտրական գործընթացների համապատասխանությունը ԵԱՀԿ պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների համար այլ միջազգային չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը: Քվեարկության օրվա համար, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն միացրեց ուժերը ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) հետ՝ հրապարակելով Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ համատեղ հայտարարություն:

Ընտրությունները, որոնք անցկացվեցին բարեփոխված իրավական դաշտի ներքո, բնորոշվեցին մրցակցային, ակտիվ և հիմնականում խաղաղ նախընտրական քարոզչությամբ, ինչը, սակայն, ընդգծվեց գործընթացների ամբողջականության նկատմամբ վստահության ցածր մակարդակով: Ընտրություններին մասնակիցների կողմից նախընտրական քարոզչության դրույթների որոշ խախտումներ, այդ թվում, վարչական միջոցների օգտագործումը և ընտրողների ընտրության ազատությունը սահմանափակելու փորձերը, ստեղծել էին անհավասար մրցակցային դաշտ և հակասում էին ԵԱՀԿ պարտավորություններին: Մինչև քվեարկության օրը, ընտրական գործընթացները կազմակերպվել են ընդհանրու առմամբ պրոֆեսիոնալ և թափանցիկ եղանակով: Քվեարկության օրը հիմնականում հանգիստ և խաղաղ էր, թեպետ դիտարկվել էին կազմակերպչական խնդիրներ և գործընթացին անհարկի միջամտություններ՝ հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից: Մտահոգության տեղիք էր տվել դիմումների և բողոքների քննության գործընթացում առկա բացթողումները:

¹ Միակ պաշտոնական փաստաթուղթը հանդիսանում է սույն զեկույցի անգլերեն լեզվով տարբերակը:

Ընտրություններն անցկացվել են նոր Ընտրական օրենսգրքի համաձայն, որը ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար ընդհանուր առմամբ ամուր դաշտ է նախատեսում: Այն պարունակում է մի շարք բարեփոխումներ, սակայն առկա են մի շարք էական թերություններ, որոնց պետք է անդրադառնալ: Ընտրական օրենսգրքի, տառացի, և թե ըստ էության, կիրառումը բավարար չեղավ նախընտրական քարոզչության համար հավասար մրցակցային դաշտ ապահովելու և ընտրողներին անհարկի ազդեցությունից պաշտպանելու համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿՀՀ) կողմից ղեկավարվող ընտրական գործընթացները կազմակերպվել են, ընդհանուր առմամբ, պրոֆեսիոնալ և պատշաճ եղանակով: Որոշ հակասական ուղղորդումը և որոշ կարևոր հարցերի վերաբերյալ ԿՀՀ կողմից պարզաբանումների բացակայությունը հանգեցրել են ընթացակարգերի հակասական կիրառման, ինչպես օրինակ հնարավոր բազմակի քվեարկության դեմ կնիքներ դնելու գործընթացում: ԿՀՀ-ն և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸՀՀ) աշխատել են բաց և թափանցիկ եղանակով, և հիմնականում վայելել են խորհրդարանական կուսակցությունների տեղական մակարդակով ներկայացուցիչների վստահությունը:

Շատ մասնակիցներ հարցականի տակ են դրել ընտրողների ռեգիստրի և ընտրողների ցուցակների ճշգրտությունը և որակը՝ հայտարարելով, որ քվեարկության օրը դրանք բաց են եղել չարաշահումների համար: Թեպետ իշխանությունները ձեռք էին առել բազմաթիվ քայլեր ընտրացուցակների ճշգրտությունը բարելավելու համար, լրացուցիչ ջանքեր և պետական կառույցների ավել լավ համակարգում է անհրաժեշտ՝ հետագա բարելավումների համար:

Թեկնածուների գրանցումը ամբողջական էր, և շատ քիչ հավանական թեկնածուներ են մերժվել: Խնդրահարույց էր, այն որ ԿՀՀ-ն քայլեր չէր ձեռնարկել թեկնածուների համար հինգ տարվա բնակության պահանջը սահմանելու և այն հավաստագրելու հստակ և օբյեկտիվ գործընթացներ հաստատելու համար: Համամասնական ցուցակների համար 20 տոկոս գենդերային քվոտայի պահանջը բավարարվել էր, թեպետ, այս քվոտայի արդյունավետությունը սահմանափակ է, քանի որ թեկնածուները կարող են ինքնաբացարկ հայտնել ցուցակի գրանցումից հետո: Սկզբնական գենդերային համամասնությունը վերականգնելու պահանջ չկա: Ընտրված բոլոր պատգամավորներից կանանց թիվը կազմում է միայն 11 տոկոս:

Նախընտրական քարոզչությունը ակտիվ էր, մրցակցային և հիմնականում խաղաղ, մի քանի առանձին բռնության դեպքերով: Ընտրական օրենսգրքի դրույթները, որոնք նպատակ ունեին բոլոր թեկնածուների համար ապահովելու հավասար հնարավորություններ քարոզչության համար շինությունների և պաստառների տարածքների առումով, հիմնականում պահպանվել են: Միննույն ժամանակ, նախընտրական քարոզչությունը ընդգծվել էր ընտրական գործընթացների ամբողջականության նկատմամբ հասարակության և շատ շահագրգռների թերահավատությամբ և ընտրական անօրինական գործողությունների, հատկապես ձայների գնման, վերաբերյալ հայտարարություններով:

Եղել են վարչական միջոցների չարաշահման դեպքեր, հատկապես կրթական ոլորտի աշխատողների կողմից քարոզչության և պաշտոնական պարտականությունների համակցում, և դեպքեր, երբ իշխող Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) ուսուցիչներին և աշակերտներին ակտիվորեն ներգրավել է քարոզչական միջոցառումներում: Բարգավաճ Հայաստան կուսակցությունը և ՀՀԿ մեկ թեկնածու խախտել են Ընտրական օրենսգրքի այն դրույթը, որն արգելում է մասնակիցներին և նրանց հետ փոխկապակցված բարեգործական կազմակերպություններին ընտրողներին տրամադրել կամ խոստանալ ապրանքներ և ծառայություններ: Վարչական միջոցների չարաշահումները, այդ թվում կրթական ոլորտի աշխատողների մարդկային ռեսուրսների ներգրավումը, խախտել են Ընտրական օրենսգրքը և նպաստել քաղաքական մասնակիցների համար անհավասար մրցակցային դաշտի ձևավորմանը՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությանը: Քարոզչության ֆինանսավորման կանոնները խստացվել են և հիմնականում պահպանվել են, սակայն հետագա բարեփոխումները շահեկան կլինեն:

Պաշտոնական քարոզարշավի ժամանակ լրատվամիջոցները ընդհանուր առմամբ պահպանել են անվճար և վճարովի եթերաժամանակ տրամադրելու իրենց պարտականությունը և ապահովել են ոչ խտրական պայմաններ և մասնակիցների անաչառ լուսաբանում: Այնուամենայնիվ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն որոշ մասնավոր լրատվամիջոցներում արձանագրել է որոշ կուսակցությունների նկատմամբ կողմնակալության դեպքեր, ինչը հակասել է Ընտրական օրենսգրքով սահմանված անաչառ լուսաբանման սկզբունքին, և դեպքեր, երբ կուսակցությունների կողմից թողարկված քարոզչական նյութերը որոշ մասնավոր հեռարձակողների կողմից ներկայացվել են որպես լրատվական նյութեր, ինչը նվազեցրել է լրատվական

հաղորդման արժանահավատությունն ու անկախությունը և սահմանափակել տեսակետների անկախ ներկայացումը:

ԿՀՀ կողմից հավատարմագրվել են մոտ 27.000 տեղական դիտորդներ 54 հասարակական կազմակերպություններից (ՀԿ-ներ): Միևնույն ժամանակ, կիրառելի իրավական դրույթների նեղ և տառացի մեկնաբանումը հանգեցրել է մի շարք ՀԿ-ների հավատարմագրումը մերժելուն: Միայն չորս ՀԿ-ներ են հրապարակել հետ-ընտրական զեկույցներ իրենց եզրահանգումների վերաբերյալ: Մտահոգիչ է մնում ընտրական օրենսգրքի այն դրույթը, որը պահանջում է ԿՀՀ-ին թեստավորել տեղական դիտորդներ լինել ցանկացող քաղաքացիներին:

Օրենսդրական դաշտը անհիմն սահմանափակում է ընտրություններին առնչվող բողոքներ ներկայացնելու իրավունքը: Սա և այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները և դատարանները քննել են ընտրական բողոքները, հաճախ թողել է շահագրգիռներին առանց իրենց բողոքների արդյունավետ քննության՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածին: Ընտրական հանձնաժողովները և դատարանները հիմնականում որդեգրել էին առավել ձևական մոտեցում բողոքները լուծելիս՝ հաճախ մերժելով բողոքները ձևական հիմքերով կամ առանց քննելու դրանց էությունը կամ կից ապացույցները: Որոշ դեպքերում, կայացվել են իրավականորեն չհիմնավորված որոշումներ: Գլխավոր դատախազությունը և Ոստիկանությունը թափանցիկ էին հաղորդված խախտումները ուսումնասիրելու իրենց գործողություններում, բայց ընտրություններին առնչվող դեպքերով քիչ թվով քրեական հետաքննություն են իրականացրել և հաճախ կեղծ հիմքերով մերժել են քրեական գործի հարուցումը:

Քվեարկության օրը հիմնականում հանգիստ և խաղաղ էր: Դիտարկված ընտրական տեղամասերից մեծ մասում քվեարկությունը կանոնակարգված էր և լավ կազմակերպված: Այնուամենայնիվ, միջազգային դիտորդները բացասական էին գնահատել քվեարկությունը ինը տոկոս ընտրական տեղամասերում, ինչը զգալի է: Այսպիսի գնահատականը մեծապես կազմակերպչական խնդիրների, հիմնականում վստահված անձանց կողմից գործընթացին անհարկի միջամտությունների և լուրջ խախտումների դեպքերի, այդ թվում ընտրողներին վախեցնելու դեպքերի, արդյունքն էր: Դիտարկված ձայների հաշվարկման գործընթացներից մեկ հինգերորդը բացասաբար է գնահատվել, հիմնականում ընթացակարգային խնդիրների պատճառով, ինչպիսիք են հիմնական վերստուգիչ ընթացակարգերը չկատարելը, ոչ-թափանցիկ հաշվարկման դեպքերը, արդյունքների վերաբերյալ արձանագրությունների լրացման հետ կապված

խնդիրները և լուրջ խախտումների առանձին դեպքերը: Արդյունքների ամփոփման գործընթացը ԸՀ-ների մեծ մասում դրական է գնահատվել, թեպետ շատ ԸՀ տարածքներ եղել են մարդկանցով գերլցված և անհամապատասխան: Արդյունքների ճշտության վերաբերյալ որոշ բողոքներ են ներկայացվել ԸՀ-ներ, ԿԸՀ և Սահմանադրական դատարան, որոնցից բոլորը մերժվել են սույն գեկույցը ներկայացնելու ժամանակ:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի հրավերով, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը Հայաստանում 2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների համար 2012 թվականի մարտի 22-ին հաստատեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ): ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ղեկավարում էր Ռադմիլա Շեկերինսկան և այն կազմված էր 17 փորձագետներից ու 24 երկարաժամկետ դիտորդներից, ովքեր տեղակայվել էին Երևանում և 10 շրջաններում ամբողջ երկրով մեկ: ԸԴԱ անդամները եկել էին ԵԱՀԿ 23 անդամ երկրներից:

Ընտրության օրը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն միացրեց ուժերը ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՎ) և Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) հետ: Ընդհանուր առմամբ ընտրության օրը տեղակայվել էին 349 կարճաժամկետ դիտորդներ ԵԱՀԿ 42 անդամ և 1 ԵԱՀԿ համագործակցության համար գործընկեր երկրներից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատեց ընտրական գործընթացների համապատասխանությունը ժողովրդավարական ընտրությունների համար ԵԱՀԿ պարտավորություններին և այլ միջազգային չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը: Սույն վերջնական գեկույցը հաջորդում է Նախնական հանգամանքների և եզրակացությունների մասին հայտարարությանը, որը հրապարակվել էր 2012թ. մայիսի 7-ին Երևանում կայացած մամլո ասուլիսի ժամանակ:²

² Նախնական հանգամանքների և եզրակացությունների մասին հայտարարությունը, ինչպես նաև Հայաստանի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ այլ գեկույցները տես՝ <http://www.osce.org/odihr/elections/armenia>.

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության վարչապետին ընտրությունները դիտարկելու հրավերի համար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ համագործակցության և հավաստագրման փաստաթղթեր տրամադրելու և Արտաքին գործերի նախարարությանը՝ համագործակցության և աջակցության համար: ԸԴԱ-ն նաև ցանկանում է շնորհակալություն հայտնել այլ ազգային և տեղական պետական մարմիններին, ընտրական մարմիններին, թեկնածուներին, քաղաքական կուսակցություններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ իրենց համագործակցության համար, և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակին, ԵԱՀԿ անդամ և համագործակցության համար գործընկեր երկրների դեսպանություններին և միջազգային կազմակերպություններին՝ իրենց աջակցության համար:

III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները նշանակվել էին փետրվարի 23-ին Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից: Գործող կառավարությունը հանդիսանում էր Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ), Բարգավաճ Հայաստան կուսակցության (ԲՀԿ) և Օրինաց երկիր կուսակցության (ՕԵԿ) միջև դաշինք: Ընտրություններից առաջ քաղաքական դաշտը պառակտված էր ամենամեծ ոչ-խորհրդարանական ընդդիմադիր խմբի՝ Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) կողմից, որը խստորեն քննադատում էր իշխանություններին 2008 թվականի հակասական նախագահական ընտրությունների և դրանց հաջորդած իրադարձությունների կապակցությամբ:

Ներկայիս ընտրական համակարգը քննադատվել է ընդդիմադիր կուսակցությունների կողմից: 2012թ. հունվարի վերջին ընդդիմադիր կուսակցություններ Ժառանգությունը և Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) օրինագիծ էին ներկայացրել՝ առաջարկելով խառը ընտրական համակարգը փոխարինել համամասնական համակարգով: Օրենքի նախագիծը փետրվարին քննարկվել էր Ազգային ժողովում, բայց չէր ընդունվել:

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայաստանում խորհրդարանական ընտրությունները հիմնականում կարգավորված են Սահմանադրությամբ և Ընտրական օրենսգրքով: 1995թ. ընդունված և 2005թ. փոփոխված Սահմանադրությունը երաշխավորում է ժողովրդավարական ընտրությունների համար անհրաժեշտ հիմնարար իրավունքները և ազատությունները: Այնուամենայնիվ, թեկնածուների համար հինգ տարվա քաղաքացիության և բնակության պահանջը, երկքաղաքացիություն ունեցող քաղաքացիներին պետական պաշտոններ զբաղեցնելու արգելքը, և անկախ կատարված հանցագործության ծանրությունից, բոլոր դատապարտյալներին ընտրության իրավունքից զրկելը, նվազեցնում են ընտրելու և ընտրվելու համընդհանուր իրավունքների երաշխիքները և հակասում են ԵԱՀԿ պարտավորություններին ու ընտրությունների միջազգային չափանիշներին:³

Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են զուգահեռաբար խառը ընտրական համակարգով: 131 պատգամավորներից 90-ը ընտրվում են համամասնական ընտրակարգով՝ մեկ համապետական ընտրատարածքից: Պատգամավորական մանդատ ստանալու համար կուսակցությունները պետք է անցնեն վավեր ձայների առնվազն հինգ տոկոսի շեմը, իսկ դաշինքները՝ առնվազն յոթ տոկոսի: Մնացած 41 պատգամավորներն ընտրվում են մեծամասնական ընտրակարգով, միամանդատ ընտրատարածքներից՝ քվեարկության մեկ փուլով: Պատգամավոր ընտրվելու իրավունք ունենալու համար անձը պետք է լինի առնվազն 25 տարեկան, առնվազն հինգ տարի լինի Հայաստանի քաղաքացի, չունենա այլ երկրի քաղաքացիություն, վերջին հինգ տարում մշտապես բնակվի Հայաստանում և ունենա ընտրելու իրավունք:

2012թ. խորհրդարանական ընտրություններն առաջին համապետական ընտրություններն էին, որ անցկացվում էին համաձայն 2011թ. մայիսին ընդունված նոր Ընտրական օրենսգրքի: Իշխանություններին, քաղաքական

³ Տես՝ 1990թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.3 և 7.5 պարբերությունները և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 25-րդ հոդված: Ինչպես նաև, Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի» կանոնները սահմանում են, որ համապետական ընտրությունների ժամանակ թեկնածուներից մշտական բնակության ցեղ չպետք է պահանջվի, և դատապարտյալների ընտրության իրավունքների սահմանափակումները պետք է համապատասխանեն իրենց կատարած հանցագործության ծանրությանը. տես՝ [http://www.venice.coe.int/docs/2002/CDL-AD\(2002\)023rev-e.pdf](http://www.venice.coe.int/docs/2002/CDL-AD(2002)023rev-e.pdf), պարբերություններ I.1.1.c-d.

կուսակցություններին և քաղաքացիական հասարակության խմբերին հնարավորություն էր տրված եղել ներկայացնելու իրենց տեսակետները նոր օրենսգրքի մշակման ժամանակ: Հանրային քննարկման գործընթացը դիտվում էր որպես քայլ ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու համար, թեպետ ընդդիմությունն ընտրել էր չմասնակցել դրան, իսկ որոշ քաղաքացիական հասարակության խմբեր դժգոհություն էին հայտնել, որ իրենց առաջարկությունները չէին ներառվել: Թեպետ Ընտրական օրենսգիրքն ընդունվել էր ընտրություններից բավական առաջ, որոշակի առումով, առկա էր իրազեկվածության պակաս և շահագրգիռների կողմից նոր կարգավորումների տարաբնույթ մեկնաբանություն:⁴

Ընտրական օրենսգիրքն ընդհանուր առմամբ ապահովում է ամուր դաշտ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Այն առաջարկում է մի շարք բարեփոխումներ, որոնցից որոշները հիմնված են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) նախկին հանձնարարականների վրա:⁵ Սակայն մնացել են որոշ էական թերություններ:⁶ Դրա, տառացի, և, թե ըստ էության, կիրառությունը բավարար չեղավ նախընտրական քարոզչության համար հավասար մրցակցային դաշտ ապահովելու և ընտրողներին անհարկի ազդեցությունից պաշտպանելու համար: Օրենսգրքի ընդունումից հետո ԿԸՀ-ն ընդունել է մի շարք լրացուցիչ կարգավորումներ:

Ոլորտին առնչվող այլ օրենքներից են, ի թիվս այլոց, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը (2002) և «Հավաքների ազատության մասին» նոր ՀՀ օրենքը (2011): «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը և Քրեական օրենսգիրքը փոփոխվել են 2011-ին՝ ավելացնելով առկա ընտրական

⁴ Օրինակ, շահագրգիռները թվում էր թե, անտեղյակ էին մինչև պաշտոնական քարոզարշավի սկսվելը քարոզչություն իրականացնել թույլատրող դրույթի վերաբերյալ և քարոզչությունը կարգավորող դրույթները միատեսակ չէին կիրառվում:

⁵ Ազգային ժողովի խնդրանքով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) հետ համատեղ Ընտրական նոր օրենսգրքի իրավական փորձաքննություն է կատարել, տե՛ս <http://www.osce.org/odihr/elections/84269> : Օրենսդրական բարեփոխումներն, ի թիվս այլոց, ընդգրկում են ընտրությունների կազմակերպման և թեկնածուների ցուցակներին ներկայացվող գենդերային քվոտան, քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը և դիմումների և բողոքների ընթացակարգերը:

⁶ Դրանք ներառում են, ի թիվս այլոց, շրջաններում մանդատների տեղաբաշխման հնարավոր անհավասարությունը, թեկնածու առաջադրվելու իրավունքի չափից ավելի սահմանափակումները, հեշտորեն թեկնածուների գրանցումը ուժը կորցրած ճանաչելը, չկարգավորված համացանցային քվեարկությունը և չափազանց սահմանափակ դիմումների և բողոքների ընթացակարգը:

հանցագործությունների համար սահմանվող պատժաչափերը, ինչպես նաև սահմանելով նոր հանցագործություններ: Ինչևէ, Քրեական օրենսգիրքը չի նախատեսում քարոզարշավի ընթացքում պաշտոնական դիրքի կամ պետական միջոցների չարաշահման համար հատուկ հանցագործություններ: Թեպետ զրպարտությունը և կեղծ լուրեր տարածելը 2010թ.-ին ապաքրեականացվել են, զրպարտիչ բնույթի քարոզչական նյութեր տարածելը մնացել է քրեական հանցագործություն:

V. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ընտրական գործընթացները կազմակերպվել էին ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգով, որը ներառում էր ԿԸՀ-ն, 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸՀՀ, մեկական յուրաքանչյուր ընտրատարածքի համար) և 1,982 տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏՀՀ): Բոլոր ընտրական հանձնաժողովները բաղկացած են 7 անդամից: Համաձայն նոր Ընտրական օրենսգրքի, ԿԸՀ և ԸՀՀ անդամները այլևս չեն նշանակվում ըստ կուսակցությունների առաջադրման և չեն կարող լինել կուսակցության անդամ կամ զբաղվեն քաղաքական գործունեությամբ:⁷ Նոր իրավական պահանջը, ըստ որի ԿԸՀ և յուրաքանչյուր ԸՀՀ առնվազն երկու անդամը ոչ բավարար ներկայացուցչություն ունեցող սեռի լինեն, պահպանվել էր: Մասնակիցները կարող էին վստահված անձեր նշանակել:⁸

ԿԸՀ անդամները նշանակվում են Նախագահի կողմից՝ Մարդու իրավունքների պաշտպանի (3 անդամ), Փաստաբանների պալատի նախագահի (2 անդամ) և Վճռաբեկ դատարանի նախագահի (2 անդամ) առաջադրմամբ: Ներկայիս ԿԸՀ-ն նշանակվել է 2011թ. հուլիսին: Համաձայն Ընտրական օրենսգրքի անցումային դրույթների, 2 անդամ նշանակվել էին 3 տարի, 3 անդամ՝ 5 տարի և 2 անդամ՝ 7 տարի ժամանակով: Հետագայում ԿԸՀ-ն կնշանակվի վեց տարի ժամկետով:

⁷ Վարչական դատարանը մերժել էր մի հայց, որով ասվում էր, որ ԿԸՀ-ն թիվ 5 ԸՀՀ-ում նշանակել է քաղաքականության հետ կապ ունեցող անդամների, այն հիմքով, որ ԿԸՀ-ն իրավասություն չունի որոշումներ իր նշանակած ԸՀՀ անդամների մասնագիտական կարողությունները կամ հնարավոր կապերը քաղաքականության հետ:

⁸ ԸՀՀ-ները թողարկել են երեքական դատարկ վստահված անձանց վկայականներ՝ ըստ յուրաքանչյուր կուսակցության, դաշինքի կամ մեծամասնական ընտրակարգով թեկնածուի և ընտրական տեղամասի: Վստահված անձինք հավատարմագրման կարիք չունեն և ընտրական վարչական մարմինները նրանց անունների վերաբերյալ տվյալներ չեն պահում:

ԸԸՀ-ները մշտական գործող մարմիններ են, որոնց անդամները նշանակվում են ԿԸՀ կողմից՝ ԸԸՀ անդամության համար ինքնաառաջադրված քաղաքացիներից: ԿԸՀ-ն նշանակել է ԸԸՀ-ների ներկայիս կազմերը 2011թ. օգոստոսին: Ընտրական գործընթացների կազմակերպման ընթացքում շահերի հնարավոր բախումը կանխող դրույթների բացակայությունը հանգեցրել է ԸԸՀ մի շարք նշանակումների, որոնք կարող էին ազդել այս հանձնաժողովների անաչառության վրա:⁹

ՏԸՀ-ները ժամանակավոր մարմիններ են, մինչև ապրիլի 11-ը դրանք ձևավորվել էին յուրաքանչյուր 1.982 տեղամասի համար:¹⁰ Յուրաքանչյուր ՏԸՀ երկու անդամ նշանակվել են համապատասխան ԸԸՀ կողմից, իսկ յուրաքանչյուր խորհրդարանական կուսակցությունը նշանակել է մնացած հինգից անդամներից մեկին: Նախնական նշանակումներից հետո քաղաքական կուսակցությունները փոխարինել են մոտ 400 ՏԸՀ անդամների՝ հիմնականում անձնական խնդրանքի հիման վրա: Նշանակվելու համար ՏԸՀ անդամներից պահանջվում էր հանձնել ԿԸՀ կողմից անցկացվող ստուգարք և ստանալ ԿԸՀ որակավորման վկայագիր:

ԿԸՀ և ԸԸՀ-ների նախագահները, տեղակալները և քարտուղարները ընտրվել էին հանձնաժողովների անդամների կողմից, իրենց կազմից: ՏԸՀ նախագահների և քարտուղարների պաշտոնները բաշխվել էին ԿԸՀ կողմից քաղաքական կուսակցությունների միջև՝ անցած խորհրդարանական ընտրությունների ժամանակ համամասնական ընտրակարգով ստացած տեղերի թվին համապատասխան, ինչը հանգեցրել էր այս պաշտոնների տարբերակված բաշխման երկրի ամբողջ տարածքով:

Խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչները արտահայտել են իրենց վստահությունը ընտրությունների կազմակերպման տեղական մակարդակի նկատմամբ, քանի որ նրանք կարող էին ՏԸՀ անդամներ առաջադրել և վստահված անձանց նշանակել ընտրությունների կազմակերպման բոլոր մակարդակներում, մինչդեռ ՀԱԿ դաշինքը, որը, որպես խորհրդարանից դուրս ուժ, ներկայացված չէր ՏԸՀ-ներում, արտահայտել էր իր անվստահությունը:

⁹ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները տեղեկացվել են, որ թիվ 20 և 21 ԸԸՀ-ների երեքական անդամ աշխատում են Արմավիրի մարզպետարանում, մինչդեռ մարզպետը, որպես թեկնածու, ընդգրկված է ՀՀԿ համամասնական ընտրացուցակում: Թիվ 41 ԸԸՀ-ն ղեկավարում է այդ ընտրատարածքի մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներից մեկի կինը: Ընտրական օրենսգիրքը չի անդադառնում այն դեպքերին, երբ շահերի բախումը կարող է հիմք հանդիսանալ ընտրական հանձնաժողովի անդամին չնշանակելու կամ փոխարինելու համար:

¹⁰ Ընտրական տեղամասերը սահմանվում են ոստիկանության կողմից և կարող են ունենալ մինչև 2000 ընտրող:

Մինչև քվեարկության օրը, ընտրական գործընթացը կազմակերպվել է հիմնականում պրոֆեսիոնալ և արդյունավետ եղանակով: ԿԸՀ-ն և ԸՀՀ-ներն աշխատել են բաց և թափանցիկ եղանակով՝ տեղեկատվություն տրամադրելով և իրենց նիստերին մուտք ապահովելով վստահված անձանց, դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների համար: Սակայն, ԿԸՀ և ԸՀՀ որոշումներն ընդունվել են սահմանափակ բաց քննարկումների միջոցով, ինչը նվազեցրել է դրանց թափանցիկությունը: Բոլոր անհրաժեշտ ընտրությունների նախապատրաստական միջոցառումները կատարվել են իրավական ժամկետների սահմաններում:

ԿԱՀ-ն բավարար մանրամասնությամբ պարզաբանել էր ընթացակարգային ամենակարևոր հատվածները և ընդունված որոշումները ընտրությունների օրվանից բավական առաջ տեղադրել իր կայքում:¹¹ Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն պատշաճ ժամանակին չէր քննարկել այն հարցը, թե արդյոք թեկնածուները կարող են քվեարկության օրը անվճար տրանսպորտային ծառայություններ մատուցել ընտրողներին¹², և արդյոք պարտադիր էր քարոզչության լրության շրջանից առաջ հեռացնել բոլոր քարոզչական աստառներն ու ցուցատախտակները¹³. երկու հարցերն էլ ծագել էին քվեարկության օրը:

Ընտրատարածքների ձևավորման ընթացքում ԿԸՀ-ն հետևել էր օրենքի պահանջին, համաձայն որի մարզում կազմավորված ընտրատարածքներից յուրաքանչյուրում ընտրողների թիվը չպետք է ավելի քան 10 տոկոսով շեղվեր մարզի ընտրատարածքի միջին չափից:¹⁴ Նոր դրույթը (Ընտրական օրենսգրքի հոդված 17.2) սահմանում է, որ ընտրատարածքի սահմանները չպետք է հատեն մարզային սահմանները: Արդյունքում, երկու մարզերում ընտրատարածքների ընտրողների թվաքանակը զգալիորեն տարբերվում էր ընտրողների միջին

¹¹ Ընտրության օրից առաջ որոշ քաղաքական կուսակցություններ և քաղաքացիական հասարակության խմբեր դիմել էին ԿԸՀ-ին կարգավորելու կամ պարզաբանելու նոր Ընտրական օրենսգրքում առկա մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում կապված էին քվեարկության օրվա ընթացակարգեր հետ, սակայն ԿԸՀ-ն թողել էր այսպիսի խնդիրները առանց ուսումնասիրության, նշելով կամ որ օրենքը բավականաչափ հստակ էր, կամ որ ԿԸՀ-ն չունի նման լայն իրավասություն օրենսգրքով նախատեսված հարցերը կարգավորելու:

¹² Ընտրական օրենսգրքի 18.7 հոդվածը հիմնականում արգելում է մասնակիցներին քվեարկության օրը ցանկացած ապրանքներ կամ ծառայություններ մատուցել ընտրողներին, չնայած դրան, դիտարկվել էին դեպքեր, երբ թեկնածուները և վստահված անձիք ընտրողներին քվեարկելու համար բերել էին ընտրական տեղամասեր:

¹³ Ընտրական օրենսգրքի չի պարունակում դրույթներ, որոնք կարգավորում են նախապես փակցված պաստառների առկայության հարցը քվեարկության և քվեարկությանը նախորդող օրերին, երբ ցանկացած քարոզչություն արգելված է:

թվաքանակից, ինչը որոշ առումով ազդել է ընտրության հավասարության վրա:¹⁵

ԿԸՀ-ն հեռուստատեսությամբ տրամադրել է ընտրությունների վերաբերյալ տեղեկատվություն և հրապարակել քվեարկության ընթացակարգերի վերաբերյալ պաստառներ և թռուցիկներ: Այն ամբողջ երկրում կազմակերպել է վերապատրաստումներ ԸԸՀ և ՏԸՀ անդամների մեծ մասի համար. ՏԸՀ վերապատրաստումներն ընդհանուր առմամբ դրական էին գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդների կողմից:

VI. Ընտրողների գրանցում

Ընտրողների գրանցումը պասիվ գործընթաց է և հիմնված է բնակչության պետական ռեգիստրի վրա: Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը պատասխանատու է համագգային էլեկտրոնային ընտրողների ռեգիստրի մշտական վարման համար, ինչը պարբերաբար թարմացվում է:¹⁶ Ընտրողների ռեգիստրն ընդգրկում է ընտրելու իրավունք ունեցող այն ընտրողներին, ովքեր գրանցված են Հայաստանում:¹⁷ Էլեկտրոնային, որոնման համակարգով ընտրողների ռեգիստրը տեղադրվել էր ԿԸՀ կայքում մարտի 26-ին, ինչպես որ պահանջվում էր օրենքով:

Քաղաքացիները կարող են դիմել 61 ԱՎՎ բաժիններին ընտրողների ցուցակներում անճշտություններն (այդ թվում այլ ընտրողների տվյալները) ուղղելու համար, ոչ ուշ, քան քվեարկության օրից հինգ օր առաջ: Ընտրողների ցուցակներում

¹⁴ Հայաստանը բաժանված է տաս մարզերի (շրջաններ), բացառությամբ մայրաքաղաք Երևանից, որը ունի հատուկ կարգավիճակ:

¹⁵ 2012թ. Հունվարի 12-ի N6-Ն ԿԸՀ որոշման համաձայն, յուրաքանչյուր ընտրատարածքում գրանցված ընտրողների միջին թվաքանակը կազմել է 60.333 ամբողջ երկրում: Հունվարի 12-ի դրությամբ թիվ 39 ընտրատարածքում գրանցված ընտրողների թիվը կազմել է 46,317 (23 տոկոսի տատանում), մինչդեռ թիվ 19, 20 և 21 ընտրատարածքներում՝ գերազանցել է 72.000-ը (ավելի քան 20 տոկոսի): Համաձայն Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) «Ընտրությունների վերաբերյալ լավագույն փորձի» կանոնների (2.2iv), սահմանված նորմայից ընդունելի տատանումը չպետք է լինի 10 տոկոսից ավել և, իհարկե, չպետք է գերազանցի 15 տոկոսը. Տես [http://www.venice.coe.int/docs/2002/CDL-AD\(2002\)023rev-e.pdf](http://www.venice.coe.int/docs/2002/CDL-AD(2002)023rev-e.pdf)

¹⁶ Ընտրողների ռեգիստրը պարբերաբար թարմացվում է և տարին երկու անգամ՝ հունիսին և նոյեմբերին, ԱՎՎ-ն ԿԸՀ-ին է ներկայացնում թարմացված ընտրողների ռեգիստրը:

¹⁷ Սահմանադրության և Ընտրական օրենսգրքի համաձայն, ընտրելու իրավունք ունեցող ընտրողները պետք է ունենան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, քվեարկության օրը լինեն առնվազն 18 տարեկան, դատարանի կողից չպետք է անգործունակ ճանաչված լինեն և չպետք է կրեն ազատազրկում:

ուղղումներ կամ մուտքագրումներ կատարելու վերաբերյալ ԱՎՎ որոշումների բողոքարկումները քննվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից, որոնց այս որոշումները չեն կարող բողոքարկվել:

Ընտրողների ցուցակները կազմվում են ընտրողների ռեգիստրի հիման վրա և համապատասխանեցվում են յուրաքանչյուր ընտրական տեղամասին՝ ըստ քաղաքացիների բնակության վայրերի: Ընթացիկ և վերջնական ընտրացուցակները¹⁸ փակցվել էին և ընտրական տեղամասերում և, առաջին անգամ ներբեռնման հնարավորությամբ, տեղադրվել ԱՎՎ կայքում, ինչպես սահմանված էր Ընտրական օրենսգրքում: Բոլոր ընտրացուցակները հրապարակային էին (բացառությամբ զինվորական միավորումներում օգտագործելու համար նախատեսվածներից) և մատչելի էին քաղաքացիների համար կամ համացանցում կամ իրենց համապատասխան ընտրական տեղամասում: Համաձայն ԿԸՀ-ի 2.523.101 ընտրողներ իրավունք ունեին ընտրել քվեարկության օրը:¹⁹

Առաջին անգամ, գրանցում չունեցող քաղաքացիները, որոնք բնակվում էին արտերկրում, բայց քվեարկության օրը գտնվել էին Հայաստանում, կարող էին մասնակցել համամասնական ընտրակարգով ընտրություններին: Նրանք պետք է, ընտրություններից ոչ ուշ, քան յոթ օր առաջ, դիմեին ԱՎՎ-ին Հայաստանում իրենց բնակության հասցեին համապատասխան ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընդգրկվելու համար:²⁰ Նույն վերջնաժամկետները կիրառվում էին այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր բնակվում էին երկրում, սակայն գրանցված չէին բնակչության պետական ռեգիստրում և այն գրանցված ընտրողների համար, ովքեր ցանկանում էին քվեարկել այն համայնքներում, որտեղ մշտապես չէին բնակվում: Հատուկ լրացուցիչ ցուցակներ էին կազմվել զինվորական անձնակազմի, կալանավայրերում գտնվող նախնական կալանքի տակ գտնվող անձանց, հիվանդանոցներում բուժում անցնող հոսպիտալացված ընտրողների և իրենց մշտական բնակության վայրից հեռու տեղակայված ոստիկանության և ազգային անվտանգության ծառայողների համար: Առաջին անգամ, արտերկրում գտնվող դիվանագիտական անձնակազմը և նրանց ընտանիքները կարող էին

¹⁸ Ընթացիկ ընտրացուցակները պետք է փակցվեն յուրաքանչյուր ընտրական տեղամասում ընտրության օրից 40 օր առաջ, իսկ վերջնական ընտրացուցակները պետք է փակցվեն ընտրության օրից 2 օր առաջ:

¹⁹ ԱՎՎ համաձայն մայիսի 5-ի դրությամբ 2.484.003 ընտրողներ էին գրանցվել, չհաշված զինվորական ընտրացուցակներում ընդգրկվածներին և ընտրության օրը SC2-ների կողմից լրացուցիչ ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիներին:

²⁰ Ընդհանուր առմամբ, քվեարկության օրվանից առաջ, այս դասին պատկանող 1.256 ընտրողներ էին ավելացվել:

քվեարկել համացանցի միջոցով քվեարկության օրվանից իննից հինգ օր առաջ: 195 մարդ օգտվել էր այս հնարավորությունից: Այս դասի լրացուցիչ ընտրացուցակները կազմվել էին միայն համամասնական ընտրակարգով ընտրությունների համար:²¹

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է ընտրողների գրանցում քվեարկության օրը: 12.2 հոդվածը անորոշ է, քանի որ այն հստակ չի սահմանում, թե որ դասի ընտրողները կարող են դիմել քվեարկության օրվանից առաջ վերջին չորս օրում և հենց քվեարկության օրը գրանցվելու համար:²² Մտահոգիչ է մնում ընտրություններից երկու օր առաջ, ՏՀՀ-ներին վերջնական ընտրողների ցուցակները տրամադրելուց հետո, ընտրացուցակներում բազմաթիվ մուտքագրումների հնարավորությունը:

Ընտրություններից առաջ գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները, բացառությամբ ՀՀԿ-ից, մտահոգություն են արտահայտել ընտրողների ռեգիստրի և ընտրացուցակների որակի վերաբերյալ՝ ի հավելումն ընտրական գործընթացների նկատմամբ ընդհանուր անվստահությանը: Այս կուսակցությունները պնդում էին, որ ռեգիստրում առկա թերությունները, ինչպես օրինակ, ուռճացված թվերը, մահացած անձանց առկայությունը և միևնույն հասցեում մեծ թվով անձանց գրանցումը, կարող էին շահարկվել ընտրությունների օրը: Նրանք նաև մտահոգություն են արտահայտել ընտրացուցակներում արտերկրում ապրող քաղաքացիների առկայության²³ և 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո մոտ 170,000 գրանցված ընտրողների թվի աճի վերաբերյալ:²⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները հաստատել են վեց

²¹ Տե՛ս՝ Ընտրական օրենսգրքի 2.5, 8.3-8.6 և 8.8 հոդվածները:

²² 12.2 հոդվածը ընտրողների գրանցում է նախատեսում «ընտրություններից չորս օր առաջ և քվեարկության օր մինչև քվեարկության ավարտը»: ԿՀՀ-ն և ԱՎԳ-ն սույն հոդվածը մեկնաբանում են, որպես գրանցված ընտրողի, տեխնիկական պատճառներով ընտրացուցակում ընդգրկված չլինելու դեպքերին վերաբերող դրույթ: 12.3 հոդվածը թույլ է տալիս ընտրողին, անձնական տվյալները ուղղելու համար, դիմել դատարան՝ ներառյալ քվեարկության օրը: Դատարանը որոշում է ընդունում՝ հանձնարարելով ԱՎԳ-ին համապատասխան փոփոխություն կատարել: Համաձայն համամասնական ընտրակարգով ընտրությունների մասով ԿՀՀ արդյունքների վերաբերյալ վերջնական արձանագրության, քվեարկության օրը ավելացվել են 1.384 ընտրողներ:

²³ Հայաստանի այն քաղաքացիները, ովքեր ապրում են արտերկրում և չեն գրանցվել Հայաստանյան դեսպանատան կամ հյուպատոսարանի կողմից, մնում են ընդգրկված Հայաստանում իրենց գրանցման վայրի ընտրացուցակում: ԱՎԳ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ այս ընտրողներին ընտրացուցակներից հանելու իրավական հիմք չկա:

²⁴ Իշխանությունների համաձայն, ընտրողների թվի աճը պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են 18 տարին լրացած քաղաքացիները և քաղաքացիություն ստացած սփյուռքահայերը (2008-ից մոտ 27,000 հոգի):

²⁵ Դիտարկվել են Գյումրիում և Երևանի թիվ 6 ընտրատարածքում:

դեպք, երբ քանդված կամ 1988թ-ի երկրաշարժից վնասված շենքերում դեռևս գրանցված ընտրողներ են առկա եղել:²⁵

Ապրիլի 28-ին մի խումբ պատգամավորներ վիճարկել են Ընտրական օրենսգրքի այն դրույթների սահմանադրականությունը, որն արգելում է ընտրություններից հետո ընտրողների կողմից ստորագրած ընտրողների ցուցակների հասանելիությունը: Մայիսի 5-ին Սահմանադրական դատարանը հաստատել է դրույթների սահմանադրականությունը և պարզաբանել, որ դրանք չեն բացառում ցուցակների հասանելիությունը՝ անձանց ընտրական իրավունքների պաշտպանության համար:

Ընտրողների ռեգիստրի վարման համար պետական կառույցների միջև տեղեկատվության փոխանակությունը բավարար կարգավորված չի եղել:²⁶ ԱՎԳ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ Ոստիկանությունը ջանքեր է գործադրել ընտրողների ռեգիստրից մահացած քաղաքացիների տվյալները հանելու ուղղությամբ, մինչդեռ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը ժամանակին և պատշաճ ձևով չի տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը: Այդ իսկ պատճառով, մահացած հայտարարված ընտրողները ռեգիստրից հանվել են բարեկամների և/կամ հարևանների գրավոր հայտարարությունների հիման վրա: Ընտրացուցակների ճշտությունը և որակը բարելավելու նպատակով՝ Ոստիկանությունը, տեղական իշխանությունների, կուսակցությունների և տեղական դիտորդների հետ համագործակցությամբ, ձեռնարկել է բազմաթիվ միջոցներ: Ոստիկանությունն իրականացրել է անմիջապես տներում ստուգումներ, ստեղծել է «թեժ գիծ» և ԿԸՀ-ի հետ համատեղ, լրատվամիջոցներով իրականացրել է ընտրողների համար տեղեկատվական արշավ:

Ի պատասխան, շահագրգիռ կողմերի՝ մեծ թվով նոր անձնագրեր թողարկված լինելու մտահոգության, ԱՎԳ-ն նշել է, որ 2011-2012 թվականների ընթացքում նոր

²⁶ Վենետիկյան հանձնաժողովը և ԵԱՀԿ-ն նախապես առաջարկել էին, որ Հայաստանյան բոլոր համապատասխան իշխանական մարմինները, ամբողջականության մոտեցմանը համապատասխան, ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը շարունակելու իրենց ջանքերը ընտրողների ճշգրիտ ցուցակ կազմելու համար: Տես՝ <http://www.osce.org/odihr/elections/84269>

թողարկված անձնագրերի թվի աճը հիմնականում պայմանավորված է եղել վավերականության ժամկետը սպառած անձնագրերի փոխարինմամբ:²⁷

VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Թեկնածուների և քաղաքական կուսակցությունների առաջադրման գործընթացը ամբողջական քաղաքական մասնակցության հնարավորություն է ընձեռնել: Գրանցվելու համար մասնակիցներից պահանջվել է ներկայացնել կուսակցության (կամ դաշինքների դեպքում՝ կուսակցությունների) կանոնադրության պատճեն, ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուի անձնական տվյալներ և հինգ տարվա քաղաքացիությունն ու Հայաստանում մշտական բնակությունը հավաստող պաշտոնական փաստաթղթերը: Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները և դաշինքները վճարել էին 8մլն ՀՀ դրամ ընտրական գրավ (15.685 եվրո)²⁸, իսկ մեծամասնական ընտրակարգով մասնակցող թեկնածուների համար ընտրական գրավը 1մլն ՀՀ դրամ էր (մոտ 1960 եվրո)²⁹: Ընտրական գրավը վերադարձվում է, եթե կուսակցությունը կամ դաշինքը համամասնական ընտրակարգով մանդատներ է ստանում, կամ եթե մեծամասնական ընտրակարգով թեկնածուն ընտրվում է կամ ստանում ձայների առնվազն հինգ տոկոսը:

Թեկնածուների գրանցման գործընթացը համապարփակ էր և ընտրողներին լայն ընտրության հնարավորություն էր տվել: Ընտրությունների համամասնական ընտրակարգով բաղադրիչի համար ԿԸՀ-ն գրանցել է բոլոր 9 կուսակցությունների ցուցակները ներկայացված 8 կուսակցությունների և 1 կուսակցությունների դաշինքի կողմից, որը կազմում է 1,016 թեկնածու: ³⁰ ԸԸՀ-ները գրանցել են 155 թեկնածուներ 41 ընտրատարածքներում, որոնցից 89 առաջադրվել են 13

²⁷ ԱՎԳ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ 2009-ին տրվել է մոտ 200,000, 2010-ին մոտ 270.000 2011-ին մոտ 398,000 և 2012թ հունվարի 1-ից մինչև ապրիլի 10-ը՝ մոտ 100,000 անձնագիր: Ոստիկանությունը տեղեկացրել է, որ 2011թ. ապրիլից երկարաձգված անձնագրերով քաղաքացիները չեն կարող մուտք գործել Շենգենյան գոտի:

²⁸ Հավասար է նվազագույն աշխատավարձի 8.000-ապատիկին: Համաձայն «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի, որպես հաշվարկային հիմք հանդիսացող նվազագույն աշխատավարձը 1000 ՀՀ դրամն է (մոտ 2 եվրո): Զեկույցի պատրաստման ժամանակ փոխարժեքի պաշտոնական չափը կազմել է մոտ 1եվրոյի դիմաց 510 ՀՀ դրամ:

²⁹ Հավասար է նվազագույն աշխատավարձի 1.000-ապատիկին:

³⁰ ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ, ՕԵԿ, Ժառանգություն, Հայաստանի կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ), Հայաստանի դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ), Միավորված հայերի կուսակցություն (ՄՀԿ) և ՀԱԿ դաշինքը:

կուսակցությունների կողմից և 66 ինքնաառաջադրմամբ. երկու ինքնաառաջադրված թեկնածուների գրանցումը մերժվել է:³¹ Որոշ դեպքերում մեծամասնական ընտրակարգով այլընտրանքի հնարավորությունը սահմանափակվել էր՝ թվով ինն ընտրատարածքներում միայն մեկ կամ երկու թեկնածուի գրանցմամբ:³² Գրանցումից հետո, 12 թեկնածու համամասնական ցուցակից և մեծամասնական ընտրակարգով առաջադրված 18 թեկնածու ինքնաբացարկ էին հայտնել: Թիվ 21 ընտրատարածքում ինքնաառաջադրված, ապրիլի 6-ին ծեծի ենթարկված և դրանից հետո ինքնաբացարկ հայտնած թեկնածուի գործը, ընտրության օրվա դրությամբ դեռևս քննվում էր իշխանությունների կողմից:

Ընտրական օրենսգիրքը չի տալիս թեկնածուների համար հինգ տարվա մշտական բնակության պահանջի հստակ սահմանում: Չնայած այս բացթողնման, ԿԸՀ-ն չէր սահմանել չափանիշներ և ընթացակարգեր այն հավաստագրելու համար:³³ Թեպետ ԿԸՀ-ն կարծիք էր արտահայտել, որ այն իրավասու չէր նման պարզաբանում ընդունել, Ընտրական օրենսգիրքը լիազորում էր ԿԸՀ-ին օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու և վերահսկելու համար լիազորում է ընդունել որոշումներ, այդ թվում ընտրական գործընթացների տարբեր ոլորտները կարգավորող, որոնք կիրառելի են բոլոր պետական մարմինների նկատմամբ:³⁴ Գործնականում ԱՎԿ-ն նման վկայագրեր տրամադրելիս ցուցաբերել էր ոչ միատեսակ մոտեցում:³⁵ Ավելին, ԿԸՀ և դատարանների կողմից քննված բողոքները ցույց էին տվել, որ որոշ թեկնածուներ հստակ տեղյակ չեն եղել գրանցման համար բնակության պահանջի վերաբերյալ:

1993թ-ին Հայաստանը միացել է «Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականության վերացման մասին» կոնվենցիային: Փաստացի, ընտրություններին մասնակցող կանանց հավասարություն դեռ պետք է ապահովվի, և այդ իսկ պատճառով անհրաժեշտ են հետագա պետական քայլեր,

³¹ Մեկ հավանական թեկնածուի գրանցումը մերժվել է մշտական բնակության հինգ տարվա պահանջը չբավարարելու պատճառով, իսկ երկրորդը չի վճարել ընտրական գրավը:

³² Թիվ 28 և 35 ընտրատարածքներն ունեին միայն մեկ գրանցված թեկնածու: Համապատասխան ընտրաթերթիկներն ունեին երկու ընտրություն՝ թեկնածուին կողմ կամ դեմ, ով ընտրվելու համար պետք է ստանար ընտրողների ձայների 50 տոկոսից ավելին:

³³ Հինգ տարվա մշտական բնակության վկայագիր ստանալու համար հինգ դիմումներ ԱՎԿ-ն մերժել էր, ինչի արդյունքում այս թեկնածուները չէին կարողացել գրանցվել:

³⁴ 36.1-2, 49.1.4, 49.1.7 և 49.1.14 հոդվածներ:

³⁵ Մինչ մեծ թվով թեկնածուների վկայագրերը տրվել էին բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա, որոշ թեկնածուների մշտական բնակությունը ավելի մանրամասն էր ուսումնասիրվել այլ պետական հաստատությունների հետ համատեղ՝ որոշ դեպքերում հիմնվելով լրատվամիջոցների հայտարարությունների վրա:

այդ թվում լրացուցիչ ժամանակավոր միջոցներ: Մինչ այժմ ձեռնարկված ամենախիստ սոցիալական միջոցը համամասնական ընտրակարգով թեկնածուների ցուցակներում երկու սեռի ներկայացուցիչների առկայության պահանջն է յուրաքանչյուր հինգ թեկնածուների թվում, սկսած երկրորդ թեկնածուից: Սակայն այս քվոտայի արդյունավետությունը սահմանափակ է, քանի որ ցուցակի գրանցումից հետո թեկնածուները կարող են ինքնաբացարկ հայտնել և սկզբնական գեկույցային համամասնությունը վերականգնելու պահանջ չկա:

Կուսակցությունները առաջադրել են կանանց՝ օրենքի պահանջին համապատասխան:³⁶ Համամասնական ընտրակարգով ցուցակների նախնական գրանված 1.061 թեկնածուներից, 235 կանայք են եղել (22 տոկոս): Ընտրության օրից առաջ 7 կին թեկնածու դուրս էին եկել կուսակցությունների ցուցակից, ներառյալ վեցը՝ ՕԵԿ ցուցակից: Արդյունքում, այս ցուցակը ներառում էր 18 տոկոս կին թեկնածուներ, ինչը պակաս էր օրենքով սահմանված նվազագույն գեկույցային քվոտայի պահանջից: Մեծամասնական ընտրակարգով նախնական գրանցված 155 թեկնածուներից 12-ը կանայք էին (մոտ 8 տոկոս): Թվով 41 ընտրատարածքներից 32-ը չունեին կին թեկնածու (78 տոկոս): Սա ցույց է տալիս, որ թեպետ կանայք թեկնածու լինելու իրավունք ունեն, այս իրավունքի իրականացումը և թեկնածու լինելու հնարավորությունը խնդրահարույց է: Ավելին, մեծամասնական 12 կին թեկնածուներից 3-ը նախընտրական քարոզչության ծախսեր չեն հայտարարագրել, ինչը կասկածի տակ է դնում նրանց թեկնածությունների իսկությունը:

VIII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Նախընտրական քարոզչության պաշտոնական շրջանը սկսվեց ապրիլի 8-ին: Թեպետ նոր Ընտրական օրենսգիրքը չի արգելում մինչև այդ օրը քարոզչություն իրականացնել, թեկնածուների մեծ մասը ձեռնպահ էր մնացել դա անելուց:³⁷ Քարոզարշավը ակտիվ էր և մրցակցային: Մասնակիցները քարոզչություն են իրականացրել հիմնականում լրատվամիջոցների, դրսում հայտարարությունների,

³⁶ Որոշ կուսակցություններ ավելի շատ կանանց էին գրանցել. ՄՀԿ-ը գրանցել էր 39 տոկոս, իսկ ՀՅԴ-ն՝ 32 տոկոս:

³⁷ Որոշ մասնակիցներ տեղյակ չեն եղել, որ մինչև պաշտոնական քարոզարշավի մեկնարկը քարոզչությունն արգելված չի: Մարտի 3-ին ԿԸՀ-ն ստացել էր ՀԱԿ-ի դիմումը, որում ՀՀԿ-ն մեղադրվում էր նախապես քարոզչություն անելու համար: Ապրիլի 4-ին թիվ 2 ԸԸՀ-ն դիմում էր ստացել ՀՀԿ թեկնածուից առ այն, որ ՀԱԿ թեկնածուն նախապես քարոզչություն է իրականացնում՝ քարոզչական թռուցիկներ բաժանելով: Երկու դիմումներն էլ մերժվել էին:

«դոնեդու» քարոզչության, հավաքների և ուղղակի (ad hoc) հանդիպումների միջոցով: Ամենաշատ աչքի ընկնողները եղել են ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն, որոնք ակտիվորեն մրցում էին միմյանց հետ, անկախ նրանից, որ երկուսն էլ իշխող կառավարության մաս էին: Նրանց համամասնական ցուցակները ներառում էին բազում պետական պաշտոնյաների, այդ թվում՝ Նախագահին, վարչապետին, նախարարների և, ՀՀԿ դեպքում, այս կուսակցության անդամ բոլոր ութ մարզպետներին:

Քարոզարշավը խաղաղ էր, բացառությամբ որոշ վիրավորական լեզվի օգտագործման և տարբեր կուսակցությունների կողմնակիցների միջև չորս բռնության դեպքերի:³⁸ Բոլոր մասնակիցները ընդգծել էին միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու իրենց պատրաստակամությունը: Անկախ իշխանությունների, մասնակիցների և քաղաքացիական հասարակության՝ գործընթացների ամբողջականությունն ապահովելուն ուղղված բազմաթիվ նախաձեռնությունների,³⁹ հասարակական վստահությունը ընտրական գործընթացների ամբողջականության նկատմամբ լուրջ խնդիր է մնացել: Քարոզարշավը ընդգծվել է ընտրացուցակներում առկա թերությունների, ընտրակեղծիքները հեշտացնելու նպատակով անձնագրեր թողարկելու և ընտրողներին վախեցնելու վերաբերյալ հայտարարություններով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ շատ զրուցակիցներ ձայների գնման հարցը բարձրացրել էին որպես հիմնական և լայն տարածում ունեցող խնդիր: Ընտրությունների օրից առաջ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդների կողմից դիտարկված որոշակի անսովոր եռուզեռը որոշ նախընտրական շտաբների դիմաց և ներսում և ընտրությունների օրը ձայների գնման դեպքերի մասին

³⁸ Այս հայտարարությունները ներառում են, ՀԱԿ թեկնածուի կողմից Նախագահ Սարգսյանին որպես «Ֆաշիստական ռեժիմի ֆյուրեր» դիմելը և ՀԱԿ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունները՝ կոչելով իշխանություններին «քրեական ռեժիմ», որն «ավելի վատն է, քան կոմունիստականը», քանի որ «այն օգտագործում է բանակը՝ սեփական քաղաքացիներին ոչնչացնելու համար»: Բռնության դեպքը ներառել են ապրիլի 15-ին և 16-ին Երևանում ծեծկոտուքի դեպքեր, երբ ՀՀԿ կողմնակիցները հարձակում են կատարել ՀԱԿ թեկնածուների և ակտիվիստների վրա, որոնք ՀՀԿ կողմնակիցների կարծիքով վիրավորանք պարունակող քարոզչական նյութեր են տարածել:

³⁹ Դրանք ներառել են Նախագահի և ԿԸՀ նախագահի հրապարակային հայտարարությունները, Խորհրդարանի և գլխավոր դատախազի կողմից ձևավորված աշխատանքային խմբերը, ընտրական խախտումներին հետևելու նպատակով ԲՀԿ, ՀԱԿ և ՀՅԴ կողմից ձևավորված միջկուսակցական շտաբները, ՀՀԿ-ի կողմից նախաձեռնված վարքագծի կանոնները (միացել են ԲՀԿ-ն, ՀԴԴ-ն, ՕԵԿ-ը, ՀԿԿ-ն), «Թրանսփարենսի ինթերնեյշնլի» քարոզչության ֆինանսավորման մոնիթորինգի ծրագիրը և IFES-ի կողմից իրականացված ընտրողների իրազեկվածության ծրագիրը: Եվրոպական միության կողմից ֆինանսավորված և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացված ծրագիր շրջանակներում, Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է ընտրությունների համար իրավական օգնության ծրագիր:

ռստիկանությանը տրված հաղորդումները մատնանշում են, որ նման հայտարարությունները, որոշ առումով, կարող էին հիմնավորված լինել:⁴⁰

Հավաքների, արտահայտվելու և տեղաշարժվելու ազատությունները հիմնականում պահպանվել էին: Այնուամենայնիվ, ընտրողների վրա ճնշման դեպքերը, ինչպես օրինակ ստիպելը աշխատողներին քարոզչական միջոցառումներին հաճախել և ՀՀԿ հանրահավաքներին մասնակցության ստուգումը, իսկ ընդդիմության հանրահավաքներին մասնակցելուն խոչընդոտելը, մտահոգություն են առաջացրել:⁴¹ Նման գործելաձևը հարցականի տակ է դնում, թե ինչ չափով են ընտրողներն ազատ եղել քննարկել և ուսումնասիրել բոլոր մասնակիցների տեսակետները: Դա կարող էր նաև բացասական ազդեցություն ունենալ առանց հետագա պատժից վախենալու քվեարկելու վրա, ինչը հակասում է ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությանը (տես նաև՝ իրավական դաշտ բաժինը):

Ընտրական օրենսգրքի 18.1 հոդվածը սահմանում է քարոզարշավի ֆիքսված ժամանակաշրջան, երբ կիրառվում են թեկնածուների համար հավասար հնարավորություններ երաշխավորող կանոնները: Տեղական իշխանությունները ընտրությունների մասնակիցներին տրամադրել էին քարոզչության համար անվճար շինություններ և պաստառների համար տարածքներ: ԿԸՀ-ն բաշխել էր լրատվամիջոցներով անվճար և վճարովի եթերաժամանակը և սահմանել էր քարոզչական ցուցատախտակների և պաստառների համար վճարովի տեղեր: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում իշխանությունները, այդ թվում ԿԸՀ-ն, չէին տրամադրել բավարար տեղեկատվություն բոլոր թեկնածուներին և արդյունքում

⁴⁰ Հրազդանում (Կոտայքի մարզ), Վանաձորում (Լոռվա մարզ) և Գյումրիում, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են անձնագրերով ընտրողների խմբեր ՀՀԿ նախընտրական շտաբների ներսում և մոտակայքում, ովքեր սպասել են, որպեսզի ինչ-որ ցուցակներ ստորագրեն: Երկարաժամկետ դիտորդները տեղեկացվել են որոշ զրուցակիցների կողմից, որ գումարը հանձնվել է ընտրողի ստորագրության դիմաց:

⁴¹ Օրինակ, ապրիլի 27-ին Գյումրիում (Շիրակի մարզ) ՀՀԿ հանրահավաքի կազմակերպիչը ստուգել է մասնակցությունը՝ խնդրելով «Գազարումի» ներկա աշխատակիցներին բարձրացնել իրենց ձեռքերը: Նույն միջոցառման ժամանակ, մշակութային հարաբերությունների Գյումրու վարչության պետը խոստացել է իր աշխատակազմի աջակցությունը ՀՀԿ-ին: Արագածոտնի մարզում երկարաժամկետ դիտորդներն արձանագրել են, որ տեղական հարկային ծառայության աշխատակիցները քննարկել են այն, որ նրանք աշխատանքից շուտ են ազատ արձակվել՝ ՀՀԿ-ի հանրահավաքին մասնակցելու համար: Արմավիր մարզում մի գյուղում մի խումբ բնակիչներ, առանձին-առանձին տեղեկացրել են երկարաժամկետ դիտորդներին, որ իշխանությունները, գյուղապետը և ՀՀԿ-ն իրենց սպառնացել են զրկել աշխատանքից, եթե նրանք մասնակցեն նույն օրը կազմակերպվող Ժառանգության հանրահավաքին: Մյուսիքի մարզում, գյուղապետերից մեկը ՀՀԿ կողմնակիցների և «կասկածելիների» ցուցակներ է կազմել՝ խնդրելով տեղի դպրոցի տնօրենին ստուգել դրանք:

նկարվել էր անհավասար վերաբերմունք:⁴² Մասնակիցները ոչ միշտ են պահպանել օրենքը, հատկապես քարոզչական նյութերը օգտագործելիս:⁴³ Թեպետ Ընտրական օրենսգիրքը կարգավորում է տպագիր քարոզչական նյութերի օգտագործումը, սակայն տպագիր նյութեր փակցնելու սահմանափակումները (հոդված 20.2) վերաբերվում են միայն քարոզչական պաստառներին, և ոչ թե այլ տեսակի քարոզչական նյութերին, ինչպես օրինակ վահանակները և ցուցատախտակները: Մինևույն ժամանակ, Ընտրական օրենսգիրքը անհիմն կերպով սահմանափակում է մասնավոր շինությունների վրա պաստառներ փակցնելը:

Դիտարկվել են վարչական միջոցների չարաշահման դեպքեր:⁴⁴ Թեպետ, Ընտրական օրենսգիրքը և «Հանրակրթության մասին» օրենքը արգելում են կրթության ոլորտի աշխատակիցների կողմից քարոզչության և պաշտոնական պարտականությունների կատարման համատեղումը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են բազմաթիվ դեպքեր, երբ ՀՀԿ-ն քարոզչական միջոցառումներում ակտիվորեն ընդգրկում է ուսուցիչներին և աշակերտներին, այդ թվում դպրոցներում կամ դասերի ժամանակ:⁴⁵ Տեղական մակարդակով ՀՀԿ քարոզարշավը իրականացվել է դպրոցների տնօրենների և

⁴² Միայն հինգ խորհրդարանական կուսակցություններ էին ներկայացրել դիմումներ՝ վճարովի ցուցատախտակների համար: Չնայած, Ընտրական օրենսգրքի 20.6 հոդվածի պահանջին, ԿԸՀ-ն չէր տեղեկացրել մեծամասնական ընտրակարգով թեկնածուներին, որ նրանք ևս կարող էին դիմել նման տարածքների համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից անհավասար վերաբերմունք էր դիտարկվել Վանաձորում, որտեղ ՀՀԿ մեծամասնական թեկնածուն քարոզչություն էր իրականացրել դպրոցում դասերի ժամանակ, իսկ ՀՅԴ և ինքնաառաջադրված թեկնածուներին թույլատրել էին դպրոցում քարոզչություն իրականացնել միայն դասերից հետո:

⁴³ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները Լոռվա մարզում դիտարկել են ՀՀԿ պաստառներ հանրային տրանսպորտի վրա, ինչպես նաև ՀՀԿ ԲՀԿ և ՀՅԴ պաստառներ՝ տեղական ինքնակառավարման շենքերի վրա: Երևանում մի քանի մասնավոր շենքերի կառավարիչներ բողոքել են թիվ 3 ԸԸՀ-ին, որ ԲՀԿ, ՀՅԴ և ՀԱԿ թեկնածուների պաստառները առանց իրենց համաձայնության փակցվել են իրենց շենքերի վրա: Արմավիրի, Լոռվա և Շիրակի մարզերում ՀՀԿ պաստառներ են նկատվել դպրոցների շենքերի վրա, որոնք նախատեսված են եղել որպես ընտրական տեղամասեր:

⁴⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները արձանագրել են, երբ շտապ օգնության մեքենայով հայտարարել են Կապանում (Սյունիքի մարզ) կազմակերպվելիք ՀՀԿ հանրահավաքի մասին, Վանաձորի տեղական իշխանությանը պատկանող բեռնատար մեքենայով ՀՀԿ-ի դրոշակներ են ամրացվել փողոցային լուսավորության սյուներին և երեք դեպք, երբ համայնքի ղեկավարները քարոզել են ՀՀԿ-ի օգտին աշխատանքային ժամերի ընթացքում (Կոտայքի մարզ):

⁴⁵ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդների կողմից ՀՀԿ հանրահավաքներին մասնակցելու համար ուսուցիչներին և ուսանողներին դասերից ազատելու կամ դասերից հետո հանրահավաքներին մասնակցելու խնդրանքների դեպքեր են արձանագրվել Էջմիածնում (Արմավիրի մարզ), Երևանում, Վարդենիսում (Գեղարքունիքի մարզ), Հրազդանում և Չարենցավանում (Կոտայքի մարզ) և Վանաձորում:

ուսուցիչների ակտիվ մասնակցությամբ: Մի դեպքում մասնավոր համալսարանի ռեկտորը, դասերի ժամանակ, ներկաներին հորդորել է քվեարկել ՀՀԿ թեկնածուների օգտին:⁴⁶ Վարչական միջոցների չարաշահումը, այդ թվում կրթական ոլորտի աշխատողների մարդկային ռեսուրսի ներգրավումը, խախտել է Ընտրական օրենսգիրքը և նպաստել է քաղաքական մասնակիցների համար անհավասար մրցակցային դաշտի ձևավորմանը՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությանը:

Ընտրական օրենսգրքի 18.7 հոդվածը արգելում է ընտրությունների մասնակիցներին և նրանց հետ փոխկապակցված բարեգործական կազմակերպություններին, նախընտրական քարոզչության ժամանակ ընտրողներին տրամադրել կամ խոստանալ ապրանքներ և ծառայություններ: ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի «Մուլտիգրուպ» ընկերությունը քարոզարշավի ընթացքում 500 տրակտոր է բաժանել: Ծրագիրը ընդգրկված է եղել ԲՀԿ քարոզարշավում:⁴⁷

Այս հարցի վերաբերյալ բողոքը լուծելիս ԿԸՀ-ն որոշել է, որ օրենքի խախտում չկա:⁴⁸ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է նաև մի դեպք, երբ ՀՀԿ թեկնածուն չի հետևել սույն հոդվածի դրույթներին:⁴⁹

Նոր Ընտրական օրենսգիրքը խստացրել է քարոզարշավի ֆինանսավորման կանոնները:⁵⁰ Ներկայացվել էին քարոզարշավի ֆինանսավորման կարգավորումների բազում փոփոխություններ, այդ թվում քարոզարշավի

⁴⁶ Նմանատիպ դեպքեր են դիտարկվել Էջմիածնում և Վանաձորում:

⁴⁷ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները նկատել են տրակտորներ յոթ մարզերում՝ հաճախ փակցված ԲՀԿ քարոզչական նյութերով կամ ԲՀԿ մեծ պաստառի կողքին կանգնեցված: Տրակտորները նաև ցուցադրվել են հեռուստացույցով ԲՀԿ քաղաքական գովազդում:

⁴⁸ ԿԸՀ-ն իր որոշումը հիմնավորել է ԲՀԿ բացատրությամբ, որ ծրագիրը եղել է գործարար բնույթի և քարոզչության հետ կապ չի ունեցել:

⁴⁹ Կապանում (Սյունիքի մարզ) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են ցուցանակ (վերանորոգվող ճանապարհի երկայնքով), որը տեղեկացրել է, որ թիվ 38 ընտրատարածքի ՀՀԿ թեկնածուն ներգրավված է վերանորոգման ծրագրում, որը ֆինանսավորվում է Քաջարանի լեռնահանքային գործարանի կողմից: Թեկնածուն այս գործարանի տնօրենի որդին է: Թիվ 38 ԸՀ-ն մերժել է այս հարցի վերաբերյալ ՀԱԿ թեկնածուի ներկայացրած բողոքը՝ հիմնավորելով, որ դա անօրինական գործունեություն չի: ԿԸՀ-ն հրաժարվել է քննել տվյալ ԸՀ-ի որոշման դեմ բերված բողոքը:

⁵⁰ Մասնակիցները պետք է բացեին հատուկ հաշվեհամար քարոզարշավի ֆինանսավորման բոլոր միջոցների համար: Հիմնադրամները կարող են կազմվել ընտրողների նվիրատվություններից, մասնակցի անձնական միջոցներից և առաջադրող կուսակցության նվիրատվություններից: Արտերկրյա և անանուն նվիրատվություններն արգելված են օրենքով:

ծախսերի ավելի բարձր սահման,⁵¹ մինչև ընտրությունների օրը ծախսերի վերաբերյալ հայտարարագրերի թվի աճ և հայտարարագրման ենթակա ծախսերի դասակարգում:⁵² Ինչևէ, այսպես կոչված կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են առևտրային կազմակերպությունների ծառայությունների վճարները, նախընտրական շտաբները, տրանսպորտը և հաղորդակցման ծախսերը, համարվում են ընտրողների կամքի վրա ազդեցություն չունեցող, և այդ պատճառով, հանված են քարոզարշավի պաշտոնական ծախսերից:⁵³ Հայտարարագրվող դասակարգերի իրավական նեղ սահմանումը մտահոգիչ է, քանի որ այն անհիմն կերպով նվազեցնում է թափանցիկությունը, հեշտ շրջանցելի է և հնարավորություն է տալիս խուսափել քարոզարշավին առնչվող ծախսերի հայտարարագրումից:⁵⁴

Քարոզչության ֆինանսավորումը վերահսկվում է ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից: Ընտրական օրենսգրքի 28.4 հոդվածի համաձայն, Խորհրդարանում ներկայացված յուրաքանչյուր կուսակցություն պետք է, իր ծախսերով, նշանակի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության մեկ վերահսկիչ: Ժառանգությունը չէր նշանակել վերահսկիչ. այն տեղեկացրել էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ դա պայմանավորված է եղել ֆինանսական միջոցների բացակայությամբ:

Ընտրական օրենսգրքի 25.1 հոդվածը պահանջում է բոլոր մասնակիցներից բացել հատուկ քարոզարշավի համար հաշվեհամարներ: Ինչևէ, ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը մեկնաբանում էր այս դրույթը որպես ոչ պարտադիր այն մասնակիցների համար, ովքեր չէին պատրաստվում գումար ծախսել իրենց քարոզարշավի համար: Մեծամասնական ընտրակարգով 11 թեկնածուներ չէին բացել քարոզարշավի համար հատուկ հաշվեհամարներ, իսկ մեկ այլ թեկնածու ծախսեր չի հայտարարագրել: Մյուս բոլոր թեկնածուները հայտարարագրեր են ներկայացրել վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը և նրանց հայտարարագրերը սահմանված ժամանակին հրապարակվել էին ԿԸՀ կայքում: Վերահսկիչ-

⁵¹ Համամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակիցների համար 100 մլն ՀՀ դրամ (մոտ 196.000 եվրո, զեկույցի ներկայացման ժամանակ) և մեծամասնական ընտրակարգով թեկնածուների համար 10 մլն ՀՀ դրամ (մոտ 19.000 եվրո):

⁵² Հայտարարագրման ենթակա ծախսերը ներառում են լրատվամիջոցներով քարոզչության, շինությունների և դահլիճների վարձակալության, քարոզչական պաստառների և ցուցանակների և տպագրված քարոզչական նյութերի համար ծախսերը:

⁵³ 2012 թ. Փետրվարի 16-ի թիվ 33 ԿԸՀ որոշում:

⁵⁴ Տես՝ նաև Ընտրական օրենսգրքի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի միասնական իրավական փորձաքննությունը. <http://www.osce.org/odihr/elections/84269> :

վերստուգիչ ծառայությունը նախաձեռնություն չի ցուցաբերել կամ արդյունավետ մեխանիզմներ չի ունեցել ներկայացված հայտարարագրերի ճշտությունը ստուգելու համար, ինչը նվազեցրել է կուսակցությունների, դաշինքի և թեկնածուների հայտարարագրման արժեքը: ԿՀՀ-ի կողմից հայտնաբերվել էին քարոզարշավի ֆինանսավորման խախտումների միայն մի քանի դեպքեր:⁵⁵

IX. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Լրատվական դաշտ

Անկախ սահմանափակ գովազդային շուկայից, Հայաստանում գործում են բազմաթիվ լրատվամիջոցներ: Համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) պաշտոնական տվյալների, 2010թ. դեկտեմբերին հեռարձակողների լիցենզավորման մրցույթից հետո, լիցենզիա ստացած հեռարձակողների թիվը նվազել էր 42-ից 15 մասնավոր հեռուստաալիքների, որոնցից 6-ը ունեն հեռարձակվում ամբողջ երկրով. բոլոր այս հեռարձակողները հիմնված են Երևանում: Ի հավելումն, 10 մարզային հեռուստաալիքներ ստացել էին թվային լիցենզիա: Հեռուստատեսությունը Հայաստանում ամենաազդեցիկ լրատվամիջոցն է: Տպագիր մամուլի շրջանառությունը սահմանափակված է քիչ տպաքանակով, իսկ օրաթերթերը հրատարակվում են միայն Երևանում: Համացանցի օգտագործումը շարունակաբար աճում է⁵⁶, բայց այն նորությունների ամենակարևոր աղբյուր է համարվում միայն սահմանափակ թվով քաղաքացիների համար:⁵⁷

Դրական զարգացումների արդյունքում, գրապարտությունը և կեղծ հայտարարությունները 2010թ. մայիսին ապաքեականացվել են, ինչն է, լրագրողների և լրատվամիջոցների դեմ գրապարտության քաղաքացիական գործերի

⁵⁵ Սա ներառել է քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ երրորդ հայտարարագիրը երկու ինքնաառաջադրված թեկնածուների կողմից չներկայացնելու (թիվ 12 և 13 ընտրատարածքներ) և Ժառանգության մեծամասնական ընտրակարգով թեկնածուի(թիվ 12 ընտրատարածք) կողմից ծախսերի սահմանված չափի գերազանցման դեպքերը:

⁵⁶ Համաձայն պաշտոնական տվյալների, 2012թ. սկզբին շարժական ինտերնետի օգտագործողների թիվը կազմել է մոտ 1.8մլն, իսկ լայնաշերտ ինտերնետ օգտագործողների թիվը մոտ 380.000:

⁵⁷ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստանի հետազոտության համաձայն, հայաստանցիների 90 տոկոսի համար հեռուստատեսությունը նորությունների ամենակարևոր աղբյուրն է, որին հաջորդում է ինտերնետը (6 տոկոս), ռադիոն (2 տոկոս) և թերթերը՝ (1 տոկոս), տես՝

http://www.crrc.am/store/armedia/CRRC_ArMedia%20Survey%20Report_FINAL%20KP_edited.pdf.

թիվը մնում է բարձր և մտահոգության տեղիք է տալիս լրատվամիջոցների ներկայացուցիչների շրջանակում: Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը հորդորել է իշխանություններին պատշաճ կերպով պաշտպանել լրատվամիջոցներին գրապարտության քաղաքացիական գործերում և ողջունել է Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ի որոշումը, որը հանձնարարում էր դատարաններին խուսափել լրատվամիջոցներին մեծ տուգանքների ենթարկել գրապարտության քաղաքացիական գործերով:⁵⁸

Իրավական դաշտը լրատվամիջոցների համար

Սահմանադրությունը երաշխավորում է խոսքի և լրատվամիջոցների ազատությունը: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը պարտավորեցնում է հեռուստաալիքներին և ռադիո ալիքներին հավասար պայմաններ տրամադրել թեկնածուներին և քարոզարշավի ընթացքում ապահովել անաչառությունը: Օրենքը սահմանում է երկու վերահսկող մարմիններ՝ ՀՌԱՀ, որը լիցենզավորում և մշտադիտարկում է մասնավոր հեռարձակողներին, և Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդը: ՀՌԱՀ ութ անդամներից խորհրդի կեսը ընտրվում են խորհրդարանի կողմից վեց տարի ժամկետով, իսկ կեսը նշանակվում են նախագահի կողմից: Նախագահը նշանակում է նաև Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի հինգ անդամներին:

Ընտրական օրենսգիրքը կանոններ է սահմանում պաշտոնական քարոզարշավի լուսաբանման համար, որոնք վերաբերում են անվճար եթերաժամանակին, նորությունների լուսաբանմանը և վճարովի գովազդին: Այն սահմանում է քարոզչության լուսային շրջան և արգելում է քվեարկության արդյունքների վերաբերյալ հրապարակումները նախքան քվեարկության ավարտը: Հանրային և մասնավոր հեռարձակողները պարտավոր են ապահովել ոչ խտրական պայմաններ և տրամադրել անաչառ տեղեկատվություն իրենց լրատվական հաղորդումներում:

Հանրային հեռարձակողը՝ Հանրային հեռուստատեսությունը և ռադիոն, պարտավոր է համամասնական ընտրակարգով գրանցված յուրաքանչյուր կուսակցության տրամադրել 60 րոպե անվճար եթերաժամանակ Հ1 հանրային հեռուստատեսությամբ և 120 րոպե՝ հանրային ռադիոյով: Ի հավելումն, յուրաքանչյուր կուսակցություն կարող է գնել 120 րոպե վճարովի եթերաժամանակ

⁵⁸ Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի 2011թ. նոյեմբերի 24-ի պարբերական գեկույցը մշտական հանձնաժողովին, հասանելի է՝ <http://www.osce.org/fom/85336>.

հանրային հեռուստատեսությամբ և 180 րոպե՝ հարային ռադիոյով:⁵⁹ Ընտրական օրենսգրքը համաձայն հանրային և մասնավոր հեռարձակողները մարտի 5-ին հրապարակել էին վճարովի գովազդի սակագները:⁶⁰

Ընտրական օրենսգիրքը ՀՌԱՀ-ի համար սահմանում է քարոզարշավի ընթացքում լրատվամիջոցներին վերաբերող դրույթների կիրառումը վերահսկելու և հեռարձակողներին մշտադիտարկելու գործառույթ: Ընտրությունների ընթացքում ՀՌԱՀ-ն պետք է հրապարակի լրատվամիջոցների դիտարկման երեք զեկույց:⁶¹ Որոշումով, որը կարծես թե օրենքի անհարկի լայն մեկնաբանության արդյունք էր, ՀՌԱՀ-ն հանձնարարել էր հեռարձակողներին տրամադրել իրենց հեռուստահաղորդումների վերաբերյալ դիտարկման զեկույցներ:⁶² ՀՌԱՀ-ն այս ընտրություններին վերաբերող իր զեկույցներում չէր ներառել որևէ գենդերային տվյալների վերլուծություն:

ՀՌԱՀ-ն իր առաջին երկու զեկույցներում չէր նշել Ընտրական օրենսգրքի որևէ խախտում: Երրորդ զեկույցից հետո, ՀՌԱՀ-ն երեք վարչական վարույթ է հարուցել երկու մասնավոր՝ «Կենտրոն հեռուստաընկերության» և «Երկիր մեդիա» հեռուստաալիքների դեմ. դրանցից երկուսը առնչվել են կողմնակալ լուսաբանմանը (երկու հեռուստաընկերությունների դեմ) և մեկը՝ լրության շրջանը խախտելուն (Կենտրոն Հ/Ը դեմ)՝ կապված ընտրությունների օրը ՀԱԿ ներկայացուցչի հետ հարցազրույցի հետ: Թեպետ այս հարցազրույցը հեռարձակվել էր ուղիղ եթերով և խախտումը թույլ էր տվել քաղաքական գործիչը, ՀՌԱՀ-ն տուգանել էր Կենտրոն Հ/Ը-ին 1 մլն ՀՀ դրամի չափով (մոտ 1.961 եվրո):⁶³ Ի հակադրություն, կողմնակալ լուսաբանման հետ կապված խախտումները չէին պատժվել, ինչը ցույց է տալիս ՀՌԱՀ կողմից լիազորությունների իրականացման

⁵⁹ Ապրիլի 2-ին ԿՀՀ-ն վիճակահանությամբ որոշել էր անվճար և վճարովի եթերաժամանակով կուսակցությունների լուսաբանման հերթականությունը:

⁶⁰ Օրենքի համաձայն, գները չեն կարող գերազանցել նախքան ընտրություններ նշանակելը վերջին վեց ամիսների համար առևտրային գովազդի համար միջին գինը:

⁶¹ ՀՌԱՀ-ն հրապարակել էր իր զեկույցները օրենքով սահմանված ժամկետներում՝ Ապրիլի 17-ին, 27-ին և մայիսի 11-ին:

⁶² Համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36.2 հոդվածի, ՀՌԱՀ-ն, իր իրավասություններն իրականացնելու համար, իրավասու մարմիններից, կազմակերպություններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն:

⁶³ Վարչական տուգանքը սահմանված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 60.7 հոդվածով: ՀԱԿ ներկայացուցիչը, ով խախտել էր քարոզարշավի լրության շրջանը, դատարանի կողմից պատասխանատվության չէր ենթարկվել՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով:

մեխանիզմների բացակայությունը:⁶⁴

Քարոզարշավի ժամանակաշրջանում, ՀՌԱՀ-ն թեկնածուներից ստացել է երեք փաստացի բողոք, բոլորը մերժվել են:⁶⁵ Միևնույն ժամանակ, ԿԸՀ-ն քննարկել և ընդունել էր լրատվամիջոցներին առնչվող խնդիրների վերաբերյալ մի շարք որոշումներ, ինչով ցուցաբերել էր լրատվամիջոցներին վերաբերող հարցերը քննելու իրավասությունների համընկնում:⁶⁶

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ ԴԻՏԱՐԿԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ լրատվամիջոցների դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ լրատվամիջոցները իրականացրել են ընտրությունների լայնածավալ լուսաբանում:⁶⁷ Դիտարկված 8 հեռուստա- և ռադիոալիքները ընդհանուրը 256 ժամ են հատկացրել ընտրություններին առնչվող հարցերին, ներառյալ լրատվական հաղորդումները, վճարովի և անվճար եթերաժամանակը և տեղեկատվական հաղորդումները: Քարոզարշավի ընթացքում լրատվամիջոցները հարցազրույցներ են ցուցադրել թեկնածուների և կուսակցությունների առաջնորդների հետ: Երկու մասնավոր հեռուստաալիք հեռուստաբանավեճեր են կազմակերպել, բայց 7 դեպքում մեկ կամ ավելի հրավիրվածներ չեն ներկայացել նշանակված

⁶⁴ ՀՌԱՀ-ն չի կարող վարչական տուգանքի ենթարկել հեռարձակողներին կողմնակալ լուսաբանման համար, ինչպես լրության շրջանը խախտելու դեպքերում: Միակ պատժիչ միջոցը, որ ունի ՀՌԱՀ-ն կողմնակալ լուսաբանումների համար, նախագգուշացումներ տալն է: ՀՌԱՀ-ն կարող է կասեցնել հեռարձակողների լիցենզիաները միևնույն խնդրի վերաբերյալ երեք նախագգուշացում տալուց հետո («Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 55.բ հոդված):

⁶⁵ Վլադիմիր Կարապետյանը (թիվ 2 ընտրատարածք) բողոք էր ներկայացրել *Արմենիա Հ/Ը և Արմնյուս Հ/Ը-ների* դեմ՝ իր հակառակորդ Սամվել Ֆարմանյանի մասի անհավասար լուսաբանման համար, իսկ մեկ այլ բողոք ՀՀ-ի դեմ՝ նույն թեկնածուի հետ հարցազրույցի համար: Անուշավան Նիկողոսյանը (թիվ 32 ընտրատարածք) բողոք էր ներկայացրել *Կենտրոն Հ/Ը դեմ*, նշելով, որ հեռարձակողը խախտել էր վճարովի եթերաժամանակի վերաբերյալ իրենց պայմանագիրը:

⁶⁶ Ընտրական օրենսգիրքը հստակ չի սահմանում, թե որ մարմինը՝ ԿԸՀ-ն, թե ՀՌԱՀ-ն իրավասություն ունի քննելու ընտրություններին առնչվող լրատվամիջոցների բողոքները՝ երկու մարմիններն էլ իրենց իրավասություն են վերապահում: ԿԸՀ-ն ընդունել է լրատվամիջոցներին առնչվող հարցերով մի շարք որոշումներ (2012թ. ապրիլի 20-ի որոշումներ N 150-Ա և N 151-Ա, ապրիլի 30-ի N 218-Ա և N 221-Ա, և 2012թ. մայիսի 4-ի N 237-Ա, N 238-Ա և N241-Ա):

⁶⁷ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն դիտարկել է վեց ազգային հեռուստաալիքների քաղաքական և ընտրություններին առնչվող լուսաբանումը հիմնական եթերաժամի (փրայմ-թայմ 18:00-24:00) ընթացքում. Հ1 (հանրային հեռուստատեսություն), Հ2, *Արմենիա Հ/Ը*, *Շանթ Հ/Ը*, *Երկիր Մեդիա*, *Կենտրոն Հ/Ը*, երկու ռադիոկայան՝ *Հանրային ռադիոն* և *Ազատ եվրոպա/ազատություն ռադիոն* և Հայաստանի Հանրապետություն պաշտոնական օրաթերթը:

բանավեճին: Ոչ մի բանավեճ չի կազմակերպվել աչքի ընկնող թեկնածուների կամ
կուսակցությունների առաջնորդների միջև:

Ընդհանուր առմամբ, հեռարձակողները մատչելի են եղել բոլոր խոշոր
կուսակցությունների համար: Սա հնարավորություն է տվել ընտրողներին
տեղեկացված լինել տարբեր քաղաքական դիրքորոշումների մասին: Նախքան
ապրիլի 8-ը պաշտոնական քարոզարշավի մեկնարկը, լրատվամիջոցները, հոգուտ
իշխող կուսակցությունների, իրականացրել են Նախագահի և պետական
պաշտոնյաների լայնածավալ լուսաբանում:⁶⁸ Ապրիլի 8-ից հետո
լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են եղել մեծամասամբ 6 հիմնական
մասնակիցները (ՀՀԿ, ԲՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ, Ժառանգություն և ՀՅԴ): Ընտրություններին
մասնակցող մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները և
համամասնական ընտրակարգով մասնակցող մնացած երեք կուսակցությունները
սահմանափակ են լուսաբանվել:⁶⁹

ՀՀ հանրային հեռուստաընկերությունը իր նորություններում 20 տոկոս լուսաբանել
է ՀՀԿ-ին, 19 տոկոս՝ ՀԱԿ-ին, 12 տոկոս՝ ՀՅԴ-ին, ՕԵԿ-ին, և Ժառանգությանը և 8
տոկոս՝ ԲՀԿ-ին: Նորությունների լուսաբանումը հիմնականում չեզոք բնույթ է կրել,
սակայն որոշակի դրական երանգ է արձանագրվել ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի հանդեպ:
Հանրային ռադիոն իր լուսաբանումը խոշոր կուսակցությունների միջև
հիմնականում հավասարապես է բաշխել: Թեպետ օրենքը սահմանում է, որ
պետական թերթերը պետք է անկողմնակալ լինեն, *Հայաստանի
Հանրապետություն* օրաթերթն իր ծավալի 24 տոկոսը տրամադրել է ՀՀԿ-ին՝
հիմնականում չեզոք կամ դրական երանգով, 12 տոկոս՝ պետական
պաշտոնյաներին և 5 տոկոս՝ Նախագահին՝ իր պաշտոնական լիազորությունների
շրջանակում:

Երկու մասնավոր հեռարձակողների լուսաբանումներ ցույց են տվել որոշակի
կողմնակալություն: *Կենտրոն* Հ/Ը-ն հիմնականում աջակցել է ԲՀԿ-ին՝ 48 տոկոս

⁶⁸ Մարտի 27-ից ապրիլի 7-ը ընկած ժամանակահատվածում Նախագահի և պետական
պաշտոնյաների լուսաբանումը դիտարկված լրատվամիջոցներով եղել է հետևյալը՝ Հ1-49
տոկոս, Հ2-28 տոկոս, *Արմենիա* Հ/Ը-19 տոկոս, *Կենտրոն* Հ/Ը-17 տոկոս, *Շանթ* Հ/Ը-51 տոկոս,
Երկիր մեդիա-18 տոկոս, *Հանրային ռադիո*-21 տոկոս և *Ազատ եվրոպա/ազատություն
ռադիոկայան*-11 տոկոս:

⁶⁹ Քարոզարշավի ընթացքում ՀԴԿ, ՀԿԿ և ՄՀԿ միասին վերցրած լուսաբանումը դիտարկված
լրատվամիջոցներով եղել է հետևյալը՝ Հ1-12 տոկոս, Հ2-16 տոկոս, *Արմենիա* Հ/Ը-9 տոկոս,
Կենտրոն Հ/Ը-6 տոկոս, *Շանթ* Հ/Ը-5 տոկոս, *Երկիր մեդիա* -11 տոկոս, *Հանրային ռադիո*-24
տոկոս և *Ազատ եվրոպա/ազատություն ռադիոկայան*-1 տոկոս:

մեծ մասամբ դրական լուսաբանմամբ, *Երկիր մեդիան* իր լուրերի լուսաբանման 27 տոկոսը հատկացրել է ՀՅԴ-ին և 16 տոկոսը՝ ԲՀԿ-ին, երկու դեպքում էլ մեծ մասամբ դրական: ՀՀ-ը, Արմենիա Հ/Ը-ն և Շանթ Հ/Ը-ն ավելի հավասարակշռված են եղել իրենց լուսաբանման մեջ, անգամ եթե առավել դրական երանգ է նկատվել ՀՀԿ, ՕԵԿ և ԲՀԿ նկատմամբ: *Ազատ եվրոպա/ազատություն ռադիոկայանը* ավելի բացասական երանգով է եղել ՀՀԿ հանդեպ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ լրատվամիջոցների դիտարկումը արձանագրել է, որ շատ դեպքերում հեռուստաալիքները, սեփական նյութերի վրա հիմնվելու փոխարեն, իրենց նորությունների հեռարձակման ընթացքում օգտագործել են նույն քարոզչական նյութը, որն օգտագործվել է նաև քաղաքական գովազդում: Օրինակ, ԲՀԿ քարոզչական նյութը, որը այդպես չի ներկայացվել, 16 անգամ հեռարձակվել է *Կենտրոն Հ/Ը*-ով, 5 անգամ *Շանտ Հ/Ը*-ով և մեկ անգամ *Երկիր մեդիայով*:⁷⁰ Ապրիլի 19-ին ՀՀ-ը և *Արմենիա Հ/Ը*-ն հեռարձակել են նույն լուրը ՀՀԿ մեծամասնական թեկնածուի քարոզչական միջոցառման վերաբերյալ: Նման գործելաոճը վնասում է լրատվական հաղորդման արժանահավատությանը և նվազեցնում է լրատվամիջոցի անկախությունը քաղաքական դաշտից և նվազեցնում լրատվամիջոցների բազմազանությունը: Երբ սա տեղի է ունենում, լուրերի և քաղաքական գովազդի միջև ոչ հստակ տարանջատումը սահմանափակում է անկախ հաղորդումների տեսակետները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ լրատվամիջոցների դիտարկումը արձանագրել է, որ ՀՀ-ը ընտրությունների հետ կապված լրատվական հաղորդումների 4 տոկոսը հատկացրել է կին թեկնածուներին և կուսակցությունների ներկայացուցիչներին, իսկ հանրային ռադիոն՝ 5 տոկոս: Սա անհամեմատ ցածր է, հաշվի առնելով, որ գրանցված բոլոր թեկնածուներից 21 տոկոսը կանայք էին, և հաշվի առնելով Հայաստանի պետական թիրախը՝ օրենսդիրում 30 տոկոս կանանց ներկայացվածություն ունենալ:⁷¹ Սա չի համապատասխանում ԵԱՀԿ՝ «կանանց կողմից քաղաքական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք մասնակցության համար հավասար հնարավորություններին նպաստելու» պարտավորություններին⁷² և «Կանանց նկատմամբ բոլոր տեսակի

⁷⁰ ԲՀԿ-ի նույն քարոզչական նյութը հեռարձակվել է ապրիլի 8-ին, 13-ին և 14-ին *Կենտրոն Հ/Ը*-ի լուրերով և ամեն օր ապրիլի 19-30 և մայիսի 4-ին, *Շանթ Հ/Ը*-ով՝ ապրիլի 9-ին, 14-ին, 19-ին, 21-ին և 23-ին, և *Երկիր Մեդիայով*՝ ապրիլի 13-ին:

⁷¹ Տե՛ս՝ http://legislationline.org/download/action/download/id/3374/file/Armenia_2010%20Gender-Concept-Paper_Engl.pdf.

⁷² ԵԱՀԿ 1991թ. Մարդու իրավունքների մասին համաժողովի Մոսկովյան խորհրդակցության փաստաթղթի 40.8 պարբերություն:

խտրականության վերացման մասին» կոնվենցիայով պետության՝ կանանց մասնակցությունը խրախուսելու պարտավորությանը:⁷³

X. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

Ընտրական օրենսգիրքը սահմանում է ընտրությունների միջազգային և տեղական դիտարկում: Տեղական, ոչ կուսակցական դիտորդները կարող են առաջադրվել հասարակական միավորումների կողմից, որոնք զբաղվում են ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին առնչվող հարցերով և հավատարմագրվել են ԿԸՀ կողմից:⁷⁴ Անհատները պետք է հանձնեն ԿԸՀ կողմից կազմակերպվող ստուգարք՝ որպես տեղական դիտորդ որակավորվելու համար:

ԿԸՀ-ն հավատարմագրել էր 647 դիտորդ 10 միջազգային կազմակերպություններից և 27.141 որակավորված դիտորդներ՝ 54 տեղական հասարակական կազմակերպություններից (ՀԿ-ներ): Հավատարմագրման գործընթացն ընդհանուր առմամբ եղել էր ամբողջական, թեպետ տեղական կազմակերպությունների կողմից հավատարմագրման 10 դիմում մերժվել էր:⁷⁵ ԿԸՀ կողմից Ընտրական օրենսգրքի 29.1.3 հոդվածի՝ առաջադրող կազմակերպությունների կանոնադրություններում «ժողովրդավարություն և մարդու իրավունքների պաշտպանություն» բառերն ունենալու պահանջի չափազանց նեղ և տառացի մեկնաբանումը հանգեցրել էր երկու տեղական կուսակցությունների մերժման, որոնց կանոնադրությունները ներառել էին «կանանց իրավունքների պաշտպանություն և զարգացում» բառերը:⁷⁶ Մայիսի 29-ի դրությամբ միայն չորս տեղական դիտորդական կազմակերպություններ էին հրապարակել հետ-ընտրական հայտարարություններ կամ զեկույցներ:

4,310 առաջադրված դիտորդներ որոշել են չհանձնել կամ չեն կարողացել հանձնել

⁷³ «Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականության վերացման մասին» կոնվենցիայի գլխավոր հանձնաժողովի 23-րդ հանձնարարական:

⁷⁴ Ընտրական օրենսգրքի 29.1.3 հոդվածը պահանջում է, որ օտարերկրյա և տեղական ՀԿ-ները իրենց կանոնադրության համաձայն զբաղվեն «ժողովրդավարությանը և մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերով», որպեսզի հավատարմագրվեն որպես դիտորդներ:

⁷⁵ 10 մերժված ՀԿ-ներից միայն երկուսը՝ «Ազատություն և Ժողովրդավարություն» և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ներն են փոփոխել իրենց կանոնադրությունները՝ հատուկ «ժողովրդավարությանը և մարդու իրավունքներ» բառերը ներառելու համար, և ինչից հետո գրանցվել են ԿԸՀ կողմից:

⁷⁶ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն»:

ԿՀՀ պարտադիր ստուգարքը և հետևաբար չեն կարողացել դիտարկել:⁷⁷ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցները պարբերաբար իրենց մտահոգությունն են հայտնել տեղական դիտորդների պարտադիր թեստավորման վերաբերյալ, մի խնդիր, որը նախկինում բարձրացվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի և կողմից:

XI. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Դիմումների և բողոքների գործընթացը կարգավորվում է Ընտրական օրենսգրքով, Վարչական վարույթի օրենսգրքով, «Վարչական վարույթի և վարչարարության հիմունքների մասին» օրենքով և «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով: Ընտրական օրենսգրքի համաձայն ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողով, իսկ ԿՀՀ դեմ բոլոր բողոքները Վարչական դատարանի ընդդատության տակ են: Թեպետ Ընտրական օրենսգրքի 18.1 հոդվածը սահմանում է, որ նախքան պաշտոնական քարոզարշավը քարոզչությունը արգելված չէ, սակայն Վարչական դատավարության օրենսգրքի 146.2 հոդվածը սահմանում է, որ քարոզչության վերահսկման վերաբերյալ ընտրական հանձնաժողովների դեմ բողոքներ չեն կարող ներկայացվել պաշտոնական քարոզարշավի մեկնարկից առաջ:⁷⁸ Ընդհանուր վարչական օրենքները թույլ են տալիս դիմողին իր ընտրությամբ բողոքն անմիջապես Վարչական դատարան ներկայացնել, ինչը ստեղծում է վերադաս հանձնաժողովների հետ իրավասությունների համընկնում:⁷⁹ Եվ մեծամասնական և համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների բողոքարկումը բացառապես Սահմանադրական դատարանի իրավասություն տակ է:

Նոր Ընտրական օրենսգրքի դրական հատկանիշներից է այն պահանջը, որ ընտրական հանձնաժողովների կողմից բողոքների քննարկման ժամանակ պետք է իրականացվի պատշաճ վարչական վարույթ: Ինչևէ, Ընտրական օրենսգիրքն

⁷⁷ ԿՀՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին որ 917 հավանական տեղական դիտորդներ չեն հանձնել ստուգարքը:

⁷⁸ Ավելին, մի գործով Վարչական դատարանը որոշել է, որ Ընտրական օրենսգրքի քարոզարշավը կարգավորող նորմերը չեն կիրառվում նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը:

⁷⁹ Ավելին, ընդհանուր վարչական իրավունքի համաձայն, դիմողները իրենց ընտրությամբ կարող են նախ բողոք ներկայացնել այն վարչական մարմնին, որը ընդունել է բողոքարկվող որոշումը, գործողությունը կամ անգործությունը:

անհիմն սահմանափակում է բողոք ներկայացնելու նրանց իրավունքը, ում անձնական ընտրական իրավունքները վտանգված են, ըստ էության, մերժելով ընտրողի՝ հիմնական ընտրական իրավունքների խախտման համար դատական պաշտպանություն ստանալու իրավունքը:⁸⁰ Ի լրումն, ընտրական իրավունքների վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումները բողոքարկման ենթակա չեն, էլ ավելի սահմանափակելով արդյունավետ իրավական փոխհատուցում ստանալու հնարավորությունը:⁸¹ Ավելին, դիմումների և բողոքների վերաբերյալ իրավական դաշտը անհիմն խրթին է:

Այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները և դատարանները քննարկել են ընտրություններին առնչվող բողոքները, հաճախ շահագրգիռ անձանց թողել են առանց իրենց բողոքների արդյունավետ քննության՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը, ինչպես նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածին:⁸² Ընտրական հանձնաժողովները և դատարանները հիմնականում որդեգրել են խիստ ձևական մոտեցում բողոքներն ուսումնասիրելիս: Համեմատած քիչ թվով պաշտոնական բողոքներ են ներկայացվել համապատասխան մարմիններին, չնայած մեծ թվով ոչ պաշտոնական բողոքների մասին է բարձրաձայնվել: Տարբեր շահագրգիռ անձինք ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին իրենց անվստահությունն են հայտնել ընտրական գործընթացների կազմակերպման, դատարանների և իրավապահ մարմինների կողմից ընտրություններին առնչվող դիմումների անաչառ և արդյունավետ լուծելու վերաբերյալ: Քաղաքացիական հասարակության խմբերը հայտնել են, որ հասարակական երկմտանք է եղել ընտրական իրավախախտումների մասին հայտնելու հետ կապված, հատկապես ձայների գնման վերաբերյալ, քանի որ քաղաքացիները վախեցել են քրեական պատասխանատվության ենթարկվել ընտրակաշառք վերցնելու կամ կեղծ հայտարարություններ անելու համար:

⁸⁰ Ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նշվում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել է իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը կամ դիտորդը՝ եթե գտնում է, որ խախտվել են որպես դիտորդի իր իրավունքները:

⁸¹ Տես՝ Վարչական դատավարության օրենսգրքի 150.1 հոդված:

⁸² ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը սահմանում է «վարչական որոշումների դեմ արդյունավետ բողոքարկման այնպիսի միջոցներ, որոնք կերաշխավորեն հիմնարար իրավունքների պաշտպանությունը և կապահովեն իրավական ամբողջականությունը» յուրաքանչյուրի իրավունքը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավասու ազգային դատարանի կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք ունի, այն արարքներից, որոնք խախտում են Սահմանադրությամբ կամ օրենքներով իրեն շնորհված հիմնարար իրավունքները»:

Քվեարկության օրվանից առաջ ԿՀՀ-ն ստացել էր 500 դիմում: Դրանց 95 տոկոսը ներկայացվել էր միևնույն անձի կողմից,⁸³ որոնք հիմնականում վերաբերվել են որպես թեկնածուներ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից քարոզչություն իրականացնելուն և լրատվության անհամաչափ լուսաբանմանը: ԿՀՀ-ն մերժել է այս դիմումների քննությունը, այն հիմքով, որ անհատ անձինք նման բողոքներ ներկայացնելու իրավունք չունեն:⁸⁴ Միևնույն ժամանակ ԿՀՀ-ն ուսումնասիրել է այս դիմումներում ներկայացված որոշ փաստեր և խախտումներ չի հայտնաբերել: ԿՀՀ ներկայացված գրեթե բոլոր մյուս դիմումների քննությունը մերժվել է ձևական հիմքերով կամ մերժվել առանց ըստ էության կամ ապացույցների քննության:⁸⁵ Որոշ որոշումներում բացակայում է հստակ իրավական հիմնավորումը,⁸⁶ իսկ շատերում բացակայում է փաստական և իրավական պատճառաբանությունը:

Քվեարկության օրվանից առաջ 30 բողոք է ներկայացվել ՀՀՀ-ներին, որոնք հիմնականում առնչվել են քարոզչության կանոնների խախտումներին, ձայների գնմանը, դպրոցներում քարոզչությանը և պաստառների վերաբերյալ կանոնների խախտումներին: Գործերի մեծ մասը պատշաճ կերպով չի ուսումնասիրվել և որոշ որոշումներում բացակայել է հստակ իրավական հիմնավորումը: Օրինակ, թիվ 19 և 23 ՀՀՀ-ները որոշում են ընդունել, որ տնօրենների և ուսուցիչների դպրոցներում քարոզչություն իրականացնել արգելված չէ, ինչը Ընտրական օրենսգրքի 18.6 հոդվածի անհիմն նեղ մեկնաբանություն է:⁸⁷ ԿՀՀ-ն ոչ մի միջոց չի ձեռնարկել այս խնդիրը լուծելու համար, սակայն մի բողոքի վերաբերյալ այն որոշել է, որ դպրոցներում քարոզչական շտաբներ բացելը արգելված չէ: Բողոքարկման շրջանակներում, Վարչական դատարանը անփոփոխ է թողել թիվ 23 ՀՀՀ-ի

⁸³ Այդ անձը նախկին պատգամավոր է և «Նախկին Խորհրդարանականների ասոցիացիա» ՀԿ նախագահը:

⁸⁴ Բողոքարկման արդյունքում Վարչական դատարանը վերահաստատել է ԿՀՀ այս բողոքները չքննելու որոշումը:

⁸⁵ Օրինակ, ԿՀՀ-ն հրաժարվել է քննել ՀՀՀ որոշումների դեմ մի քանի փաստացի բողոքներ, իսկ մի դեպքում ԿՀՀ-ն պարզապես դիմել է ՀՀՀ-ին վերաքվեարկել որոշումը՝ ստիպելով դիմողին նորից ներկայացնել իր բողոքը ԿՀՀ, որը հետո հրաժարվել է ուսումնասիրել կից ապացույցները և մերժել գործը:

⁸⁶ Օրինակ ԿՀՀ-ն որոշում է ընդունել, ըստ որի կուսակցական դրոշմների տեղակայումը կարգավորված չի, քանի որ դրանք քարոզչական պաստառներ չեն (որոնք չեն կարող փակցվել որոշակի տարածքներում, օրինակ՝ հասարակական տրանսպորտում և պետական կառույցների շենքերին), իսկ նախընտրական շտաբները կարող են տեղակայվել պետական վարչական շենքերում:

⁸⁷ Ավելին, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4.8 հոդվածը սահմանում է, որ «Ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն», իսկ «Կուսակցությունների մասին» օրենքի 5.1.1.2 հոդվածը, ի թիվս այլի, սահմանում է, որ «...կուսակցությունների գործունեությունը նախադպրոցական, դպրոցական և կրթական հաստատություններում...արգելված է»:

որոշումը:⁸⁸ Որոշ դեպքերում ԸԸՀ-ները զգուշացումներ են ներկայացրել թեկնածուներին պաստառներին առնչվող կարգավորումները խախտելու համար: Որոշ թեկնածուներ պահանջել են մասնակիցների գրանցումը չեղյալ ճանաչել ընտրական նորմերի խախտումների և զգուշացումներին չենթարկվելու համար, սակայն ոչ մեկը չի բավարարվել:⁸⁹

Քվեարկության օրվանից առաջ 24 բողոք է ներկայացվել Վարչական դատարան: Գրեթե բոլորի քննությունը մերժվել է կամ ձևական հիմքերով հայցը մերժվել է՝ առանց բողոքի բուն էությունը քննելու կամ առանց լուրջ իրավական հիմքի: Չորս գործ վերաբերվել են թեկնածուների գրանցմանը: Հավանական թեկնածուներից մեկը, ում գրանցումը մերժվել էր և մեծամասնական (թիվ 10 ընտրատարածք) և համամասնական ընտրակարգով, բողոքել էր, որ ԱՎԿ-ն անհիմն մերժել է իրեն հինգ տարվա բնակության վկայագիր տալը, և դրա արդյունքում և ԸԸՀ-ն, և ԿԸՀ-ն անօրինական կերպով մերժել են իր գրանցումը:⁹⁰ Երկու մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ (թիվ 19 և 37 ընտրատարածքներում) բողոքել են, որ իրենց հակառակորդներն անօրինական կերպով են գրանցվել՝ չհամապատասխանելով հինգ տարվա մշտական բնակության պահանջին: Դատարանը մերժել է բոլոր չորս գործերը ձևական հիմքերով՝ առանց բուն խնդրի ուսումնասիրության, թե արդյոք մշտական բնակության պահանջը իրավականորեն բավարարված է եղել:⁹¹ Մի հայցվոր հաջորդիվ բողոքարկել էր

⁸⁸ Դատարանը սահմանել էր, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4.8 հոդվածը, որն արգելում է դպրոցներում քաղաքական գործունեությունը և քարոզչությունը, չպետք է տառացի մեկնաբանվի:

⁸⁹ Ընտրական իրավախախտումների համար միակ պատիժները զգուշացումն է կամ գրանցումը չեղյալ ճանաչելը: Սահմանված չեն տուգանքներ, որոնք կերաշխավորեին, որ պատժամիջոցները արդյունավետ լինեն և կհամապատասխանեն կատարված խախտումների ծանրության աստիճանին: Ավելին, 18.8 հոդվածը պահանջում է ընտրական հանձնաժողովներից դիմել դատարան թեկնածուի գրանցումը չեղյալ ճանաչելու համար, ով չի հետևում խախտումը վերացնելու նախագգուշացմանը, անկախ կատարված խախտման ծանրությունից:

⁹⁰ Հայցվորին սկզբում տրամադրել են հինգ տարվա մշտական բնակության վկայագիրը, բայց հետագայում այն հետ է կանչվել՝ հայցորդի՝ երկրից երկար բացակայության մասին լրատվամիջոցով կատարված հայտարարության հիման վրա կատարված հետաքննության արդյունքում, որը պարզել է, որ հայցվորը վերջին հինգ տարում տաս ամիս բացակայել է Հայաստանից:

⁹¹ Դատարանը պնդել է, որ այն իրավասություն չունի քննելու բողոքների բուն էությունը, քանի որ հայցվորները իրենց բողոքը ներկայացրել էլ ԱՎԿ-ի հավաստագրի տրման/հետ կանչման և ԸԸՀ-ի և ԿԸՀ-ի որոշումների, այլ ոչ թե ԱՎԿ-ի հավաստագիր տալուն և հետ կանչելուն ուղղված գործողությունների դեմ: Երբ մի հայցվոր, հաջորդիվ հայց է ներկայացրել ԱՎԿ գործողությունների դեմ, դատարանը մերժել է հայցի քննությունը՝ ընտրական իրավունքների պաշտպանության համար հայց ներկայացնելու եռօրյա ժամկետը խախտելու պատճառաբանությամբ:

դատարանի որոշումը՝ վիճարկելով ընտրական իրավունքների վերաբերյալ դատարանի որոշումների բողոքարկման հնարավորությունն արգելող դրույթի սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը մերժել էր հայցի քննությունը՝ հայցի ակնհայտ անհիմն լինելու հիմնավորմամբ:⁹²

Գլխավոր դատախազությունը և Ոստիկանությունը թափանցիկ էին հաղորդված խախտումները ուսումնասիրելու իրենց գործողություններում, որոնցից շատերը վերաբերել են ձայների գնմանը: Այնուամենայնիվ, քվեարկության օրից առաջ միայն մեկ քրեական հետաքննություն է հարուցվել և ոչ մի պատիժ չի նշանակվել հավանական իրավախախտների նկատմամբ: Շատ գործեր կարճվել էին, որոշները միայն ակնհայտ մակերեսային ուսումնասիրությունից հետո:⁹³ Թվում էր, թե այս հաստատությունները նպատակ ունեին կասկածի տակ դնել ընտրական խախտումների վերաբերյալ հաղորդումները, փոխանակը ապահովելու, որ ընտրական հանցագործությունները բացահայտվեին և մեղավորները պատասխանատվության ենթարկվեին:⁹⁴ Երեք դեպքերով Ոստիկանությունը մերժել էր քրեական գործի հարուցումը այն հիմքով, որ իրավախախտների կողմից կատարված հանցագործությունն արդարացված էր եղել իրենց անձնական ընտրական իրավունքների պաշտպանությամբ:⁹⁵ Նման անգործությունը խաթարում է օրենքի գերակայությունը: Թեկնածուների և քարոզարշավի մասնակիցների դեմ բռնությունների որոշ դեպքեր Ոստիկանության կողմից քննվել էին որպես հասարակ հանցագործություններ՝ ընտրական հանցագործությունների փոխարեն:⁹⁶

⁹² Մայիսի 31-ին համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները վիճարկող գործով, Սահմանադրական դատարանը սահմանել էր, որ անհրաժեշտ են մշտական բնակչության վկայագիր տալու (չտալու) հետ կապված վեճերի դատական քննությունը բարելավող իրավական միջոցառումներ, որոնք կերաշխավորեն այս դատական գործերի ըստ էության քննությունը:

⁹³ Ոստիկանության համաձայն, քրեական գործ հարուցելու նպատակով 60 դեպք է ուսումնասիրվել, շատերը քարոզչական գործողություններին խոչընդոտելու և ձայների գնման վերաբերյալ: Քվեարկության օրից առաջ 22 գործ կարճվել էին՝ ապացույցների բացակայության հիմքով:

⁹⁴ Պաշտոնական հայտարարություններում, իրավապահ մարմինները հաճախ անդրադարձել են ընտրական խախտումների վերաբերյալ հաղորդումներին ինչպես «լուր» կամ «բամբասանք» և որ ուսումնասիրությունները հաստատել են, որ «հաղորդումները կեղծ են» կամ «ապացուցել են հանցագործության բացակայությունը»:

⁹⁵ Այս դեպքերը ներառել են մեծամասնական թեկնածուի կողմնակիցների կողմից հակառակորդ թեկնածուի քարոզչական նյութեր տարածելուն խոչընդոտելու և դրանք բռնի հավաքելու դեպքեր: Ոստիկանությունը նյութերը համարել էր զրպարտիչ, այդ իսկ պատճառով հանցագործներին ազատել է պատասխանատվությունից:

⁹⁶ Քրեական օրենսգրքի համաձայն, թեթև մարմնական վնաս հասցնելու հասարակ հանցագործությունների համար շատ ավելի քիչ ազատազրկում է սահմանվում (մինչև երկու ամիս), քան բռնության գործադրմամբ քարոզչության իրավունքներին խոչընդոտելը (մինչև հինգ տարի):

XII. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Քվեարկության օրը, ընդհանուր առմամբ, հանգիստ և խաղաղ էր: ԿԸՀ-ն հայտարարել էր, որ բոլոր գրանված ընտրողների 62.3 տոկոսը մասնակցել է համամասնական ընտրակարգով ընտրություններին: Քվեարկության օրը միջազգային դիտորդները դիտարկել են 1.982 ընտրական տեղամասերից բացումը՝ 105-ում և քվեարկության ընթացքը՝ 1.007-ում,⁹⁷ և ձայների հաշվարկը՝ 125-ում: Նրանք նաև ներկա են եղել բոլոր 41 ԸՀ-ներում և ներկայացրել են 120 զեկույց քվեարկության նյութերի հանձման և արդյունքների ամփոփման վերաբերյալ:

Դիտարկված գրեթե բոլոր ընտրական տեղամասերում մասնակիցների վստահված անձինք ներկա են եղել քվեարկության բացման, քվեարկության և արդյունքների հաշվակի ընթացքում: ՀՀԿ և ԲՀԿ վստահված անձինք ներկա են եղել ավելի քան 80 տոկոս, իսկ ՀԱԿ և ՕԵԿ վստահված անձինք ավելի քան 60 տոկոս ընտրական տեղամասերում: Մեծ թվով տեղական դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայություն է արձանագրվել քվեարկության բացման (դիտարկված ընտրական տեղամասերից 73 տոկոսում), քվեարկության (87 տոկոս) և քվեարկության փակման և ձայների հաշվարկի (91 տոկոս) ժամանակ: Դիտարկված ընտրական տեղամասերից 32 տոկոսում ՏԸՀ նախագահները և 48 տոկոսում ՏԸՀ անդամները կանայք էին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Բոլոր 105 ընտրական տեղամասերից, որտեղ քվեարկության բացումը դիտարկվել էր, բացառությամբ երեքից, բացման ընթացակարգերը դրական էին գնահատվել, թեպետ արձանագրվել էին որոշ ընթացակարգային խնդիրներ: Մասնավորապես, դիտորդները զեկույցել էին, որ 16 ընտրական տեղամասերում այն չհրկիզվող պահարանների կողպեքները, որտեղ գիշերվա ընթացքում պահված են եղել քվեարկության նյութերը, կողպված չեն եղել, իսկ 3 տեղամասում շարժական քվեատուփերը պատշաճ կերպով կնքված չեն եղել:

⁹⁷ Միջազգային դիտորդները ընդհանուրը ներկայացրել են 1.304 դիտարկման զեկույցներ քվեարկության վերաբերյալ, որոշ ընտրական տեղամասեր քվեարկության ընթացքում դիտարկվել են մեկից ավելի անգամ:

Միջազգային դիտորդները արձանագրել են, որ *Կենտրոն Հ/Ը* լրագրողները նկարահանում են կատարել ընտրական տեղամասերում: *Կենտրոն Հ/Ը* որոշ լրագրողներ հայտնել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդներին, որ իրենք նկարահանում են ԲՀԿ անունից, որը մոտ 2000 տեսախցիկ է գնել քվեարկության օրվա գործընթացները նկարահանելու համար:

Դիտարկված ընտրական տեղամասերից մեծ մասում քվեարկության ընթացքը լավ կազմակերպված և ըստ կարգի էր: Գրեթե ամենուր ընտրական տեղամասերի տարածքները պատշաճ կարգի էին, առկա էին անհրաժեշտ ընտրական և տեղեկատվական նյութերը, իսկ ընտրացուցակները հասանելի էին հասարակության կողմից ստուգման համար: Այնուամենայնիվ, կազմակերպչական խնդիրներ, գործընթացին անհարկի միջամտության և լուրջ խախտումների դեպքեր են դիտարկվել զգալի թվով ընտրական տեղամասերում (9.4 տոկոս), ինչը զգալի է:

Դիտարկված ընտրական տեղամասերից 15 տոկոսում, կազմակերպվածության բացակայությունը կամ ՏՀՀ անդամների և վստահված անձանց կամ դիտորդների միջև տարաձայնությունները բացասաբար են ազդել քվեարկության ընթացքի վրա: Միջազգային դիտորդները դիտարկված ընտրական տեղամասերից 203-ում (16 տոկոս) մարդկային կուտակումներ են արձանագրել, դրսում քվեարկել սպասող ընտրողների մեծ խմբեր՝ 197 ընտրական տեղամասում (15 տոկոս) և լարվածություն կամ անհանգստություն՝ 49 ընտրական տեղամասում (4 տոկոս): Դիտարկված 696 ընտրական տեղամասեր (55 տոկոս) հաշմանդամների համար մատչելի չեն եղել:

Միջազգային դիտորդները արձանագրել են 134 դեպք (դիտարկումների 11 տոկոս), երբ համապատասխան իրավասություն չունեցող անձիք, հիմնականում վստահված անձիք, միջամտել կամ ուղղորդել են ՏՀՀ-ների աշխատանքը: Նրանք նաև արձանագրել են 46 դեպք (4 տոկոս), երբ մարդիկ փորձել են ազդել ընտրողի ընտրության վրա, ինչպես նաև ընտրողների վրա ճնշման կամ վախեցնելու 28 դեպք (2 տոկոս):

Միջազգային դիտորդները արձանագրել են մի շարք լուրջ խախտումներ, այդ թվում, խմբակային քվեարկության 145 դեպք (դիտարկված ընտրական տեղամասերից 11 տոկոսում), վստահված անձանց կողմից քվեարկության 58 դեպք (4 տոկոս), բազմակի քվեարկության 24 դեպք (2 տոկոս) և ընտրողների

ցուցակներում մի շարք նույնանման ստորագրությունների 30 դեպք (2 տոկոս):⁹⁸ Դիտարկված ընտրական տեղամասերից 84-ում (7 տոկոս) ընտրատուփերը պատշաճ կարգով կնքված չեն եղել: Քվեարկության գաղտնիությունը ոչ միշտ է ապահովվել, քանի որ ոչ բոլոր ընտրողներն են գաղտնի նշում կատարել իրենց քվեաթերթիկների վրա (դիտարկված ընտրական տեղամասերից 12 տոկոս) կամ նախքան ընտրախցից դուրս գալը դրանք ծրարի մեջ դրել (13 տոկոս): Միջազգային դիտորդները դեպքեր են արձանագրել, երբ վստահված անձանց կամ լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից տեսանկարահանումը խախտել է ընտրության գաղտնիությունը: Ընտրողների անձերի ստուգման ընթացակարգերը հիմնականում պահպանվել են: Դիտարկված ընտրական տեղամասերից 3 տոկոսում ընտրողներին թույլ չեն տվել քվեարկել, քանի որ նրանց անունները ընտրացուցակում չեն եղել:

Ընտրողների անձնագրերում դրվող հատուկ կնիքի թանաքը (բազմակի ընտրության դեմ երաշխիք) պետք է տեսանելի լիներ 12 ժամ, բայց անցել է շատ ավելի շուտ: Որպես ԿԸՀ-ի, որը նախապես չէր ստուգել թանաքը, և ԸԸՀ-ների կողմից տրված հակասական ուղղորդումների արդյունք, ՏԸՀ-ները շարունակել են օգտագործել ցնդող թանաքը, մինչդեռ մյուսները օգտագործել են ընտրական ծրարները կնքելու համար նախատեսված թանաքը կամ երկու տիպի թանաքներն էլ՝ խառը:

Քվեարկության օրը 200 դիմում է ներկայացվել ՏԸՀ-ներին և ԸԸՀ-ներին այնպիսի հարցերի հետ կապված, ինչպիսիք են մարդկային կուտակումները, անձնագրերի կնքումը, բազմակի քվեարկությունը, ընտանիքով քվեարկությունը և ձայների գնումը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտարկել էր մի քանի դեպքեր, երբ դիմումների գրանցումը մերժվել էր:⁹⁹ ԿԸՀ-ն ստացել էր քվեարկության օրվա հետ կապված 30

⁹⁸ Վախեցնելու և քվեարկության գաղտնիության հետ կապված խնդիրները հիմնականում համարվում են կանանց վրա ավելի մեծ ազդեցություն ունեցող, քանի որ այն ընտանիքներում կամ համայնքներում, որտեղ տղամարդիկ ավելի հզոր են, նրանք կարող են օգտագործել իրենց ավելի բարձր դիրքը կանանց ընտրության վրա ձնշում գործադրելու համար: Այս տեսակետը կիսել են նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ տարբեր գրուցակիցներ: Ոչ մի լրացուցիչ միջոցներ, ինչպես օրինակ քվեարկության գաղտնիության պաշտպանության բարձրացումն է և կանանց համար քվեարկության վերաբերյալ լրացուցիչ կրթությունը կամ լուսաբանում է, ԿԸՀ կողմից չեն ձեռնարկվել՝ տղամարդկանց կողմից կին ընտրողների վրա ազդեցությունը կանխելու համար:

⁹⁹ Օրինակ թիվ 36 ԸԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդներին, որ այն չի գրանցել 12 դիմում, քան որ դրանց կից ապացույցներ չեն ներկայացվել: Թիվ 17 ԸԸՀ-ն հրաժարվել է քննել մի քանի ընտրական տեղամասերում արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմումը՝ հիմնավորելով, որ ժամկետը բաց է թողնվել: ԿԸՀ-ն մերժել է դրա բողոքարկումը, նրա որոշումը մասամբ ենթադրել է, որ ԿԸՀ-ն ընդհանուր առմամբ, ընտրական տեղամասի արդյունքները չեղյալ հայտարարելու իրավասություն չունի, անգամ, եթե ԸԸՀ-ն անօրինական կեպով հրաժարվել է անել այդ:

դիմում այնպիսի խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են քարոզչությունը լուրջան շրջանում, ձայների գնում, անճշտություններ ընտրացուցակներում, վստահված անձանց և դիտորդների իրավունքների իրականացման խոչընդոտում և քվեարկության ընթացքին վստահված անձանց միջամտություն: ԿԸՀ ներկայացված բոլոր դիմումների քննությունը մերժվել է կամ չի բավարարվել:¹⁰⁰ Ընտրական օրենսգիրքը չի սահմանում, որ քվեարկության օրվան առնչվող դիմումները անմիջապես քննվեն, և որոշ ԸՀ-ներ և ԿԸՀ-ն որոշումներ են ընդունել քվեարկության օրից մի քանի օր անց:

Քվեարկության օրը և դրանից մեկ օր անց, Ոստիկանությունն ուսումնասիրել է քրեական հանցագործությունների վերաբերյալ 78 հաղորդումներ, որոնցից մեծ մասը ձայների գնման վերաբերյալ: Այլ դեպքեր վերաբերել են վստահված անձանց կողմից քվեարկությանը, խմբակային քվեարկությանը, բազմակի քվեարկությանը, շրջանային քվեարկությանը և ձայների լցումմանը: Ոստիկանությանը հայտնվել են նաև քվեարկության ընթացակարգերին տեղական իշխանությունների միջամտությունների և ընտրական տեղամասերում լրագրողների գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ հաղորդումներ: Հարուցվել է միայն 7 քրեական հետաքննություն՝ երկուսը ձայների գնման, չորսը լրագրողների գործունեությանը խոչընդոտելու և մեկը՝ ոստիկանության սպայի վրա հարձակման դեպքերով:

ԶԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Միջազգային դիտորդների կողմից դիտարկված ձայների հաշվարկը հիմնականում իրականացվել է ընթացակարգերին համապատասխան: Ինչևէ, դիտարկված 125 ընտրական տեղամասերից 24-ում ձայների հաշվարկը բացասական է գնահատվել՝ հիմնականում ընթացակարգային խնդիրների, ինչպես նաև լուրջ խախտումների առանձին դեպքերի պատճառով:

Դիտարկված բոլոր ձայների հաշվարկին ներկա են եղել վստահված անձիք: Միջազգային դիտորդները արձանագրել են, որ 13 դեպքում վստահված անձինք միջամտել կամ ուղղորդել են ձայների հաշվարկի գործընթացը, իսկ 33 դեպքում հաշվարկին մասնակցել են ոչ ՏՀՀ անդամներ: Լիազորություն չունեցող անձանց նման անհարկի ներգրավումը մտահոգիչ է, քանի որ այն նվազեցնում է անկախ ընտրական վարչարարության սկզբունքը:

¹⁰⁰ Անձնագրերը կնքելու վերաբերյալ երկու դիմում է ներկայացվել նաև Վարչական դատարան. մեկի քննությունը մերժվել է բաց թողնված ժամկետի հիմնավորմամբ, իսկ մյուսը չի բավարարվել:

Որոշ ՏՀՀ-ներ անմիջապես քվեարկության ավարտից հետո չեն սկսել ձայների հաշվարկը կամ չեն իրականացրել օրենքով պահանջվող ստուգիչ գործողություններ, ինչպես օրինակ, ընտրացուցակում ընտրողների ստորագրությունները հաշվելը: Քիչ թվով ՏՀՀ-ներ են հաշվարկն իրականացրել ոչ թափանցիկ եղանակով, անտեսելով բոլոր ծրարները և քվեաթերթիկները ներկաներին ցույց տալու պահանջը, կամ շրջանցելով հնարավոր խախտումների դեմ երաշխիքները, ինչպես օրինակ մինչև ընտրատուների բացումը ընտրողների ցուցակը, չօգտագործված քվեաթերթիկները և ծրարները հավաքելը: Միջազգային դիտորդները արձանագրել են լուրջ խախտումների մասնակի դեպքեր, ինչպես օրինակ, արդյունքների կամ արձանագրության կեղծում (5 դեպք) կամ նկատել են, որ ընտրատուները նախապես լցունվել են (5 դեպք): 18 ՏՀՀ-ը չեն հրապարակել արձանագրությունների պատճենները՝ հասարակական ստուգման համար: ՏՀՀ-ները հաճախ չեն ստուգվել արձանագրությունների թվերը, ինչի արդյունքում արձանագրությունների արդյունքները միշտ չէ, որ համապատասխանել են, իսկ դիտարկված ՏՀՀ-ներից 26-ում արձանագրությունը լրացնելու հետ կապված խնդիր են եղել: Որոշ արձանագրություններ լրացված չեն եղել ամբողջությամբ: Սա նշանակում է, որ ՏՀՀ վերապատրաստումները չեն հանգեցրել ձայների հաշվարկի ընթացակարգերի բավարար մակարդակով իմացության:

Դիտորդներին ընտրական տեղամասից դուրս բերելու չորս դեպքերը, ձայների հաշվարկի ընթացքում երկար ընդմիջումների վեց դեպքերը և ՏՀՀ անդամների կողմից պաշտոնական արձանագրությունների նախապես ստորագրված լինելու չորս դեպքերը երևույթներ են, որոնք նվազեցրել են ձայների հաշվարկի գործընթացի ընդհանուր թափանցիկությունը:

ՁԱՅՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ձայների ամփոփման գործընթացը դրական է գնահատվել 41 ԸՀ-ներից 33-ում: Թեպետ գործընթացը թափանցիկ է եղել գրեթե բոլոր ԸՀ-ներում, շատ ԸՀ տարածքներում մարդկային կուտակումներ էին և համապատասխան չէին ՏՀՀ արձանագրությունները ստանալու և մշակելու համար: ՏՀՀ-ների շատ արձանագրություններ ամբողջությամբ լրացված չեն եղել և հաճախ ՏՀՀ-ները ստիպված են եղել թվաբանական սխալներ ուղղել (օրենքով սահմանված կարգով): Միջազգային դիտորդներն արձանագրել են, որ 11 ԸՀ-ներ փոփոխել են արձանագրությունների տվյալները (ինչը արգելված է օրենքով) և 26 ԸՀ-ների արդյունքների նախնական ամփոփումն օրինակները չեն հրապարակվել:

հասարակության կողմից ստուգման համար, ինչպես դա պահանջվում է օրենքով, այդպիսով նվազեցնելով գործընթացի թափանցիկությունը:

Քվեարկության գիշերը, 01:30-ից սկսած, ԿԸՀ-ն սկսել էր իր կայքում հրապարակել համամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքների՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները, ինչը նպաստել է արդյունքների ամփոփման ընթացքի թափանցիկությանը: Այնուամենայնիվ, մեծամասնական ընտրակարգով՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները ԿԸՀ-ն իր կայքում հրապարակել է միայն մայիսի 12-ին: Մայիսի 7-ին ԿԸՀ-ն և ԸԸՀ-ները հրապարակել են և համամասնական, և մեծամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքները:

Ընտրություններից հետո, համամասնական ընտրակարգով ցուցակներից ընտրված 23 ընտրված թեկնածու, ներառյալ ՀՀԿ, ՕԵԿ և ՀԱԿ ցուցակների առաջնորդները, որոշել են չվերցնել իրենց մանդատները և փոխարինվել են ցուցակում ընդգրկված իրենց հաջորդող թեկնածուներով: Ընդհանուրը եղել է և ընտրված, և չընտրված թեկնածուների ավելի քան 100 ինքնաբացարկ, այդ թվում 67 հոգի ՀՀԿ և 28 հոգի ԲՀԿ ցուցակներից: Ինքնաբացարկներից հետո, նոր Խորհրդարանը ունի 14 կին և 117 տղամարդ անդամ: Չնայած համամասնական ցուցակներում 20 տոկոս գենդերային քվոտային, կանայք կազմում են բոլոր պատգամավորների միայն 11 տոկոսը:¹⁰¹ Ինքնաբացարկ հայտնած ընտրված թեկնածուների մեծ թիվը (ընտրված պատգամավորների 18 տոկոս) մտահոգիչ է ընտրողների ընտրությունը հարգելու տեսանկյունից:

XIII. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

Ընտրական օրենսգիրքը թեկնածուներին, վստահված անձանց (այն դեպքում, երբ նրանք ձայների հաշվարկման ժամանակ ներկա են եղել ընտրական տեղամասում), ինչպես նաև ՏԸՀ անդամներին (եթե նրանց հատուկ կարծիքը նշված է եղել արդյունքների բողոքարկվող արձանագրությունում) իրավունք է վերապահում կոնկրետ ՏԸՀ արդյունքները վերահաշվարկելու վերաբերյալ դիմում ներկայացնել վերադաս ԸԸՀ, մինչև ընտրություններին հաջորդող օրը ժամը 18:00:¹⁰²

¹⁰¹ Մինչև ինքնաբացարկներ հայտնելը, ընտրությունների արդյունքներով 17 կին էր ընտրվել նոր Խորհրդարան (131 պատգամավորների 13 տոկոս), այդ թվում երկու մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ:

¹⁰² ԸԸՀ-ները լիազորված են նաև իրենց նախաձեռնությամբ կատարել վերահաշվարկ:

ԿԸՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել է համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների 17 ընտրական տեղամասում վերահաշվարկի դիմումների և մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների 33 վերահաշվարկի դիմումների վերաբերյալ: Արդյունքում, ԸՀ-ները իրականացրել են 11 ՏՀ-ների համամասնական ընտրակարգով արդյունքների վերահաշվարկ, իսկ մեծամասնական ընտրակարգով՝ 27 ՏՀ ընտրությունների արդյունքների վերահաշվարկ: Մյուս դիմումները մերժվել են՝ հնարավոր սխալների վերաբերյալ ապացույցների բացակայության պատճառով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները դիտարկել են որոշ վերահաշվարկման գործընթացներ և գնահատել են դրանք, որպես օրենքին համապատասխան իրականացված, բաց և թափանցիկ եղանակով և համապատասխան ՏՀ անդամների, դիմողների, դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությամբ: Երկարաժամկետ դիտորդների կողմից դիտարկված վերահաշվարկների արդյունքները էականորեն չեն տարբերվել սկզբնական արձանագրությունների արդյունքներից:

Մայիսի 11-ին ԸՀ-ները հաստատեցին բոլոր 41 ընտրատարածքների մեծամասնական ընտրակարգով ընտրությունների վերջնական արդյունքները, իսկ ԿԸՀ-ն Մայիսի 13-ին միաձայն հաստատեց համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները, նախքան դատարանների կողմից կավարտվեին ընտրություններին առնչվող բոլոր դիմումների և բողոքների քննությունները: Մայիսի 18-ին ԿԸՀ-ն հայտարարեց, որ նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստը կգումարվի մայիսի 31-ին:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն հնարավորություն է ունեցել համեմատել միջազգային դիտորդների կողմից ստացված համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների 112 ՏՀ հաստատված արձանագրությունների քաղվածքները և մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների 90 ՏՀ հաստատված արձանագրությունների քաղվածքները ԿԸՀ կայքում հրապարակված տվյալների հետ: Ոչ մի լուրջ անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել, թեպետ եղել են 17 մանր տեխնիկական թերությունների դեպքեր:

ԿԸՀ կողմից հրապարակված ՏՀ մակարդակով համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները ցույց են տվել, որ ընտրողների մասնակցությունը ամենացածրը եղել է թիվ 35 ընտրատարածքում (49.1 տոկոս) և ամենաբարձրը՝ թիվ 23, 38 և 16 ընտրատարածքներում (75 տոկոս): Որոշ ընտրական տեղամասեր ունեցել են անսովոր բարձր մասնակցություն: 300 կամ ավելի գրանցված 1.748 ընտրական տեղամասերից 17-ում մասնակցությունը գերազանցել է 90 տոկոսը: Նշված ընտրական տեղամասերում, բացառությամբ երեքի, ՀՀԿ-ն ստացել է շատ

ավելի բարձր ձայների բաժին, քան այն ստացել էր ամբողջ երկրով մեկ: Այս ընտրական տեղամասերից իննում հինգ-ը ՀՀԿ-ն ստացել է ձայների 90 տոկոսից ավելին, իսկ մեկում ԲՀԿ օգտին ձայների գրեթե 99 տոկոս:

Մեծամասնական և համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների իսկությունը վիճարկող որոշ դիմումներ են ներկայացվել ԸՀ-ներին, ԿԸՀ-ին և Սահմանադրական դատարան, որոշները կրկնակի են ներկայացվել: Թեպետ Սահմանադրությունը և Ընտրական օրենսգիրքը սահմանում են, որ ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարելու վերաբերյալ դիմումներ քննելը բացառապես Սահմանադրական դատարանի լիազորությունն է, ԿԸՀ-ն և ԸՀ-ները քննել և որոշումներ են կայացրել նմանատիպ գործերով՝ փոխանակ դիմումները դատարան վերահասցեագրելուն:

ՀԱԿ-ը և ԲՀԿ-ն դիմումներ են ներկայացրել ԿԸՀ-ին համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներ չեղյալ ճանաչելու պահանջով՝ հիմք ընդունելով քարոզարշավի ընթացքում և քվեարկության օրը բազմաթիվ խախտումների վերաբերյալ հայտարարությունները: ԲՀԿ-ն հետագայում հետ էր վերցրել իր դիմումը: Իր դիմումի ԿԸՀ կողմից քննության ընթացքում, ՀԱԿ-ը նույն դիմումը ներկայացրել էր Սահմանադրական դատարան: ԿԸՀ-ն մերժել էր ՀԱԿ դիմումը, այն հիմքով, որ ընտրությունների արդյունքները կարող են չեղյալ հայտարարվել միայն, եթե խախտումները կարող էին ազդեցություն ունենալ արդյունքների վրա, թեպետ ԿԸՀ-ն չէր ուսումնասիրել, թե արդյոք հայտնված խախտումները տեղի են ունեցել: Սահմանադրական դատարանը մայիսի 31-ին մերժել էր ՀԱԿ դիմումը:

Թիվ 3, 6 և 30 ԸՀ-ները դիմումներ էին ստացել իրենց՝ համապատասխան մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների դեմ: Թիվ 3, 7, 9, 17, 37 և 38 ընտրատարածքների մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները վիճարկող դիմումներ էին ներկայացվել Սահմանադրական դատարան: Թիվ 30 և 37 ընտրատարածքների վերաբերյալ դիմումները պահանջում էին արդյունքները չեղյալ ճանաչել, մասամբ, այն հիմքով, որ հաղթանակած թեկնածուները չէին բավարարում հինգ տարվա մշտական բնակության պահանջը:¹⁰³ Սույն զեկույցի ներկայացման ժամանակ ընդունվել էին

¹⁰³ Թիվ 37 ԸՀ թեկնածուն այն հայցվորներից մեկն էր, ով նախկինում Վարչական դատարանում վիճարկել էր իր հակառակորդի գրանցումը, այն հիմքով, որ վերջինս չէր բավարարում հինգ տարվա մշտական բնակության պահանջը և ում պահանջի ըստ էության քննությունը սահմանված կարգով մերժվել էր:

չորս որոշում, բոլորը հաստատել էին համապատասխան ընտրատարածքների արդյունքները:

XIV. ՀԱՆՁՆԱԲԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն հանձնարարականները ներկայացվում են Հայաստանյան իշխանություններին, քաղաքական կուսակցություններին և քաղաքացիական հասարակությանը քննարկման համար, ինչը կօգնի նրանց հետագա՝ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար ԵԱՀԿ պարտավորություններին և այլ միջազգային չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը համապատասխան ընտրություններ անցկացնելու ջանքերին: 2007 և 2008 թվականների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ վերջնական զեկույցներում և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի 2011թ. համատեղ իրավական կարծիքում ներառված շատ հանձնարարականներ ուղղակիորեն առնչվում են նաև 2012թ. խորհրդարանական ընտրություններին: Սույն հանձնարարականները կոչված են լրացնել նշվածներին և պետք է հաշվի առնվեն և քննարկվեն այդ նախկին հանձնարարականների հետ միասին:¹⁰⁴

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը պատրաստակամ է աջակցելու Հայաստանյան իշխանություններին և քաղաքացիական հասարակությանը՝ ընտրական գործընթացների հետագա բարեփոխման համար:

Ա) ԱՌԱՋՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԲԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Իշխանությունները և մասնակիցները ավելի մեծ հարգանք պետք է ցուցաբերեն քաղաքացիների՝ իրենց քաղաքացիական և քաղաքական նախասիրություններն ազատ արտահայտման նկատմամբ, ինչպես պահանջվում է ԵԱՀԿ 1990 Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությամբ: Նրանք պետք է ձեռնպահ մնան ընտրողների վրա ճնշումներ գործադրելուց, թե քարոզարշավի ընթացքում, և թե քվեարկության օրը:
2. Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի ընտրական գործընթացների ամբողջականության նկատմամբ հասարակական

¹⁰⁴ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ 2007թ. վերջնական զեկույցի թիվ 7, 10, 11, 30 և 32 հանձնարարականները և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ 2008թ. վերջնական զեկույցի թիվ 3, 16, 17, 20, 21, 28 և 30 հանձնարարականները ամբողջությամբ, կամ մասամբ, ուղղակիորեն առնչվում են 2012 խորհրդարանական ընտրություններին:

վստահությունը բարձրացվի: Դրանք կարող են ներառել, բայց չսահմանափակվել, ընտրական և պետական իշխանությունների աշխատանքների թափանցիկության ավելացմամբ, քվեարկության գաղտնիության վերաբերյալ ընտրողների լրացուցիչ ուսուցմամբ և ձայների գնման և ձայներ գողանալու դեմ լայնածավալ քարոզչության իրականացմամբ: Ձայների գնման առնչությամբ կարող է հատուկ քննարկվել Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու հնարավորությունը՝ հատուկ անձեռնմխելիություն սահմանելով ձայների գնման հանցագործություններ վերաբերյալ հաղորդող անձանց համար, և քաղաքացիներին պետք է խրախուսել ձայների գնման դեպքերի վերաբերյալ հաղորդելու և ապացույցներ ներկայացնելու համար: Այս միջոցներից որոշները կարող են իրականացվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և այլ շահագրգիռների հետ համատեղ կամ նրանց հետ խորհրդակցելով:

3. Ընտրություններին առնչվող օրենսդրության միատեսակ կիրառումն ապահովող միջոցառումները պետք է ուժեղացվեն: Սա ներառում է անհրաժեշտ որոշումներ և պարզաբանումներ ընդունելու ԿԸՀ լիազորության ընդլայնում, որոնց կիրառումը պարտադիր կլինի բոլոր շահագրգիռների համար:
4. Ընտրողների ցուցակների ճշտությունը բարելավելու ջանքերը պետք է շարունակվեն: Այս նպատակով, իշխանության տարբեր մարմինների միջև պետք է ստեղծվի ծանուցման արդյունավետ համակարգ, որպեսզի դյուրինացվի տեղեկատվության փոխանակումը և հնարավորություն տրվի ընտրողների ռեգիստրում և ընտրողների ցուցակներում ժամանակին ուղղումներ կատարել: Միևնույն ժամանակ, պետք է լուծվեն միևնույն բնակարանում մեծ թվով կամ բնակության համար ոչ պիտանի շինությունների ընտրողների գրանցված լինելու խնդիրները: Սա հատուկ ուշադրության կարիք ունի՝ առաջիկա 2013թ. նախագահական ընտրությունների տեսանկյունից:
5. Իրավապահ մարմինները պետք է երաշխավորեն, որ բոլոր այն անձիք, ովքեր քարոզարշավի և ընտրությունների օրը կկատարեն ընտրություններին առնչվող հանցագործություններ, պատշաճ կարգով պատասխանատվության կենթարկվեն: Ընտրություններին առնչվող հանցագործությունները չպետք է քննվեն ինչպես հասարակ հանցագործությունները և հանցագործները չպետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից, այն հիմքով, որ նրանց

կողմից հանցագործություն կատարելը արդարացված է եղել իրենց ընտրական իրավունքների պաշտպանությամբ:

6. Ընտրական հանձնաժողովները, իրավապահ մարմինները և դատարանները պետք է մեկնաբանեն, կիրառեն և գործածեն ընտրական իրավական դաշտը՝ հաշվի առնելով օրենքի ոգին և նպատակը, որն ուղղված է մասնակիցների համար հավասար մրցակցային դաշտ, ընտրողների կամքի ազատությունն և ընտրական գործընթացների ամբողջականությունն ապահովելուն: Մա պետք է ներառի ձայների գնման և դպրոցներում քարոզչության ու քարոզարշավին կրթական ոլորտի աշխատակիցների և ուսանողների ներգրավման արգելքի ավելի լայն մեկնաբանություն: Ի լրումն, Քրեական օրենսգիրքը կարող է փոփոխվել՝ ներառելով հանցագործություն՝ քարոզարշավի ընթացքում պաշտոնական դիրքը և վարչական միջոցները չարաշահելու համար: Զրպարտիչ քարոզչական նյութեր տարածելու համար քրեական հանցագործությունը պետք է ուժը կորցնի:
7. Ընտրական հանձնաժողովները և դատարանները, ընտրություններին առնչվող դիմումները քննելիս, չպետք է չափազանց ձևական մոտեցում ցուցաբերեն: Նրանք պետք է խուսափեն դիմումների և բողոքների քննությունը մերժելուց, պետք է պատշաճ կերպով ուսումնասիրեն բոլոր դիմումների էությունը և կատարեն բոլոր կից ապացույցների անկողմնակալ և ամբողջական ուսումնասիրություն: Ընտրական հանձնաժողովները պետք է ակտիվ դեր ստանձնեն դիմումները հիմնավորելու համար ապացույցների հավաքման հարցում և այս առումով, ավելի սերտ համագործակցեն իրավապահ մարմինների հետ:

Բ. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

8. Իրավական դաշտը պետք է փոփոխվի՝ թեկնածուների համար հինգ տարվա քաղաքացիության և մշտական բնակության պահանջը և բոլոր դատապարտյալներին, անկախ նրանց կողմից կատարված հանցագործությունների ծանրության աստիճանի, ընտրելու իրավունքից զրկելու սահմանափակումը վերացնելու համար: Նվազագույնը, օրենքը պետք է հստակեցնի մշտական բնակության պահանջը և սահմանի թափանցիկ և

օրյեկտիվ ընթացակարգեր որոշելու համար, թե արդյոք այդ պահանջը բավարարված է:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

9. Ընտրական գործընթացների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստումները պետք է շարունակվեն և ընդլայնվեն հատուկ ուշադրություն դարձնելով ձայների հաշվարկի և արդյունքների ամփոփման ընթացակարգերին:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

10. Ընտրողների գրանցման ընթացակարգերի ամբողջականության նկատմամբ հասարակական վստահությունը բարձրացնելու նպատակով իշխանությունները կարող են տարբեր շահագրգիռ անձանց հրավիրել մասնակցելու իրենց կողմից նախաձեռնված և վերահսկվող ընտրացուցակների հասարակական վերստուգման գործընթացին: Այդ նպատակով, ներբեռնելու հնարավորությամբ ընտրացուցակները կարող են հասարակության համար հասանելի մնալ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: ԱՎԿ-ն պետք է շարունակի հասարակությանը պարբերաբար տեղեկացնել ձեռնարկված միջոցների մասին, հատկապես առաջիկա նախագահական ընտրությունների տեսանկյունից:

11. Իշխանությունները պետք է վերանայեն քվեարկության օրն ընտրողներին ընտրացուցակներում ավելացնելու մեխանիզմները: Ընտրական օրենսգիրքը պետք է հստակեցնի, թե ինչ հանգամանքներում և որ կարգի ընտրողները կարող են քվեարկության օրը ավելացվել ցուցակներում և պետք է պարունակի հստակ, հատուկ երաշխիքներ՝ ՏՀՀ-ների կողմից վերջնական ընտրացուցակները ներկայացնելուց հետո, ընտրությունների օրից առաջ վերջին երկու օրերում ընտրացուցակներում հնարավոր բազմակի մուտքագրումների դեմ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

12. Կարող է վերանայվել քարոզչական նյութերի տեղակայման նկատմամբ ավելի միասնական մոտեցում ցուցաբերելու հարցը: Ընտրական օրենսգրքի 20.2 հոդվածը պետք է փոփոխվի՝ տարածելով քարոզչական պաստառների տեղակայմանն առնչվող սահմանափակումների կիրառումը բոլոր տպագիր

քարոզչական նյութերի վրա: Միննույն ժամանակ, կարող է վերանայվել մասնավոր կառույցների վրա քարոզչական նյութեր տեղակայելու սահմանափակումների շրջանակի նեղացումը: Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ սահմանելով քարոզչության կանոնների խախտումների համար տուգանքների կիրառում, որը կհամապատասխանի թույլ տրված խախտման ծանրությանը, և կարգելի փոքր խախտումների համար գրանցումն ուժը կորցրած ճանաչելը:

13. Քարոզչության հետ կապված ծախսերի սահմանումը կարող է վերանայվել՝ ընդլայնելու այն այնպես, որ մասնակցի քարոզչության հետ կապված բոլոր ծախսերը հնարավոր լինի ներառել:
14. Քարոզչության ֆինանսավորման թափանցիկությունը ավելացնելու նպատակով, ընտրությունների բոլոր մասնակիցները պետք է պարտավորված լինեն բացելու հատուկ քարոզչության համար նախատեսված հաշվեհամարներ և ներկայացնեն քարոզչության ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվություններ՝ անկախ նրանից, թե արդյոք նրանք քարոզչության համար նախատեսում են կամ ծախսում են դրամական միջոցներ: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կարող է ավելի ակտիվ դեր ունենալ՝ բոլոր մասնակիցների կողմից հաշվետվությունների թափանցիկությունն ապահովելու համար: Կուսակցությունների կողմից վերահսկիչների նշանակումը պետք է պարտադիր լինի. ծախսերը պետք է հատուցվեն պետական բյուջեի միջոցներից:

ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

15. Ընտրական օրենսգիրքը կարող է փոփոխվել՝ իրավունք տալով քաղաքացիներին (կամ մի խումբ քաղաքացիների), հավատարմագրված տեղական դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին դիմումներ ներկայացնել ընտրական հանձնաժողովերի որոշումների և գործողությունների, քարոզչության անօրինական իրականացման և ընտրությունների արդյունքների դեմ: Վարչական վարույթի օրենսգրքի այն դրույթը, որն արգելում է նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը քարոզչությանը վերաբերող դիմումների ներկայացումը, պետք է ուժը կորցնի:
16. Իրավական դաշտը պետք է փոփոխվի, որպեսզի պարզեցվեն ընտրություններին առնչվող դիմումների և բողոքների ընթացակարգերը՝ սահմանելով մեկ միասնական ենթակայական ընթացակարգ և բացառելով

կրկնակի ընդդատությունը: Տարբեր օրենքներում սահմանված համապատասխան դիմումներին և բողոքներին վերաբերող դրույթները պետք է համախմբել մեկ տեղում կամ հղում կատարել Ընտրական օրենսգրքում:

ԼՐԱՏՎԱՄԻՁՈՑՆԵՐ

17. Կուսակցությունների կողմից պատրաստված ցանկացած քարոզչական նյութ պետք է նշվի որպես այդպիսին հեռարձակման ժամանակ: Ամեն դեպքում, նման նյութը չպետք է ներառվի լրատվական հաղորդումներում՝ առանց հստակ նշման, որ այն կուսակցության կամ մասնակցի կողմից կամ նրա օգտին պատրաստված քարոզչական նյութ է:
18. Լրատվամիջոցներին առնչվող և իրավակիրառ մեխանիզմների առումով ՀՌԱՀ իրավասությունները կարող են ավելի հստակեցվել: Այդ արդյունքին հասնելու համար ՀՌԱՀ կողից համապարփակ ուղեցույցի ընդունումը ցանկալի կլինի: Դիմումների լուծման ընթացակարգերը պետք է ժամանակին, հստակ և մատչելի լինեն, որպեսզի բարձրացնեն վստահությունը և դիմումատուին տրամադրեն արդյունավետ փոխհատուցում: Պատժամիջոցները պետք է հստակ սահմանված լինեն և համաչափ լինեն կատարված խախտման ծանրությանը:
19. ՀՌԱՀ-ն պետք է իրականացնի լրատվամիջոցների իր դիտարկումը հիմնվելով իր սեփական միջոցների վրա՝ այլ ոչ թե, հանձնարարելով լրատվամիջոցներին իրենց սեփական հեռուստահաղորդումների վերաբերյալ զեկույցներ ներկայացնել: Այս նպատակով, պետք է քննարկվի անհրաժեշտ իրավասությունները և միջոցները զարգացնելու հնարավորությունը: ՀՌԱՀ-ն կարող է նաև քննարկել իր լրատվամիջոցների դիտարկման մեթոդոլոգիայի մեջ լուսաբանման երանգի գնահատում ներառելը, որպեսզի որոշի հնարավոր քաղաքական կողմնակալությունը:

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

20. Թեկնածուներ առաջադրման քվոտայի արդյունավետությունը պետք է վերանայվի, որպես ժամանակավոր հատուկ միջոց՝ կանանց որպես թեկնածու լինելու իրավունքի և հնարավորության փաստացի հավասարությանը հասնելու նպատակով:
21. Պետք է խրախուսել կուսակցություններին ունենալ գենդերային քաղաքականություն և հանրորեն տրամադրել իրենց անդամների գենդերային

բաշխվածության վերաբերյալ տվյալները: Կարելի է քննարկել, որպեսզի կուսակցություններին պահանջ ներկայացվի իրենց ղեկավար կառավարման մարմիններում կանանց ներկայացվածություն ապահովել և թեկնածուներ ընտրելու ավելի թափանցիկ ու ժողովրդավարական եղանակներ ունենալ:

22. Հանրային լրատվամիջոցները պետք է ապահովեն, որ կանայք իրենց լուսաբանումներում նվազ ներկայացված չլինեն, և կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու համար կարող են ձեռնարկվել ժամանակավոր հատուկ միջոցներ (ինչպես օրինակ, կին թեկնածուներին լրացուցիչ եթերաժամանակ տրամադրել, պահանջել կուսակցություններից հարցազրույցների համար կին թեկնածուներ առաջադրել և կանայք քաղաքականությունում թեմայի վերաբերյալ հաղորդումներ ցուցադրել): ՀՌԱՀ-ն կարող է իրականացնել գեներային վերլուծություն իր լրատվամիջոցների դիտարկման շրջանակներում:

ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

23. Պետք է վերանայել տեղական դիտորդների պարտադիր ստուգարքի և հավատարմագրման պահանջը: Ինչպես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի կողմից նախկինում ասվել էր, դիտորդների ցանկացած վերապատրաստում պետք է լինի դիտարկող կազմակերպության պարտականությունը, այնուամենայնիվ, ԿՀՀ-ն կարող է քննարկել լրացուցիչ վերապատրաստումներ կազմակերպելու հարցը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ

24. Պետք է բարձրաձայնվի ընտրական տեղամասերում և ԸՀ-ներում մարդկային կուտակումների խնդիրը, ընտրական տեղամասերի տարածքները պետք է ավելի հարմար լինեն մեծ թվով մարդկանց և հաշմանդամների համար:
25. Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ սահմանելով ընտրական հանձնաժողովների և դատարանների կողմից ընտրություններին առնչվող դիմումների քննության շատ կարճ վերջնաժամկետներ, և համապատասխանեցնելով ընտրությունների վերջնական արդյունքները հրապարակելու վերջնաժամկետը ընտրություններին առնչվող բոլոր դիմումների և բողոքների ներկայացման և քննության վերջնաժամկետների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արձանագրության ոլորտը	Համամասնական ընտրակարգով արդյունքներ	Մեծամասնական ընտրակարգով արդյունքներ
Ընտրողների թիվը հիմնական ընտրողների ցուցակում	2,501,597	
Ընտրողների թիվը քվեարկության օրը կազմված լրացուցիչ ընտրողների ցուցակում	1,384	
Ընտրողների թիվը, ըստ գտնվելու վայրի կազմված լրացուցիչ ընտրողների ցուցակում	15,363	
Գրանցում չունեցող ընտրողների թիվը	1,256	
Ոստիկանության ծառայողների թիվը ընտրողների լրացուցիչ ցուցակներում	1,493	
Ընտրողների թիվը բժշկական հաստատություններում ընտրողների լրացուցիչ ցուցակներում	1,809	
Ընտրողների թիվը նախնական կալանավայրերում ընտրողների լրացուցիչ ցուցակներում	4	
Ընտրողների թիվը էլեկտրոնային քվեարկության ընտրողների լրացուցիչ ցուցակներում	195	
Բոլոր ցուցակներում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը	2,523,101	2,512,654
Ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը	1,573,053	1,560,411
Մասնակցություն	62.3%	62,1%
ՏՀՀ-ների կողմից ոչնչացված չօգտագործված քվեաթերթիկների թիվը	1,021,265	1,019,187
Անվավեր քվեաթերթիկների թիվը	53,831	80,148

Կուսակցության/դաշինքի անվանումը	Ստացված ձայների քանակը	%	Համամասնական ընտրակարգով ստացած տեղերի քանակը	Մեծամասնա- կան ընտրակար- գով ստացած տեղերի քանակը	Տեղերի ընդհան- ույր քանակը
Բարգավաճ Հայաստան	454,673	30.2 %	28	9	37
Ժառանգություն	86,998	5.8 %	5		5
Հայ ազգային կոնգրես	106,903	7.1 %	7		7
Հայ հեղափոխական դաշնակցություն	85,550	5.7 %	5	1	6
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	5,577	0.4 %	0		0
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	15,899	1.1 %	0		0
Հայաստանի հանրապետական կուսակցություն	664,440	44.1 %	40	29	69
Միավորված հայերի կուսակցություն	2,945	0.2 %	0		0
Օրինաց երկիր կուսակցություն	83,123	5.5 %	5	1	6
Ինքնաառաջադրված թեկնածուներ	–		–	1	1
<i>Ընդհանուր</i>	<i>1,506,108</i>		<i>90</i>	<i>41</i>	<i>131</i>

[Source: CEC website; www.elections.am]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է, որը կոչված է աջակցել անդամ երկրներին «ապահովել մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական հարգումը, հաստատել օրենքի գերակայություն, զարգացնել ժողովրդավարական սկզբունքները և (...) կառուցել, ամրապնդել և պահպանել ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև բարձրացնել հասարակությունում հանդուրժողականությունը» (1992թ. Հելսինկյան համաժողովի փաստաթուղթ): Սա կոչվում է ԵԱՀԿ մարդու իրավունքներ:

Վարչապետ (Լեհաստան) հիմնադրված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990թ. Փարիզյան համաժողովում, որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991թ. մայիսից: Մեկ տարի անց, գրասենյակի անունը փոխվում է՝ մարդու իրավունքների և ժողովրդավարացման ընդլայնված լիազորություններն արտահայտելու նպատակով: Այսօր այն ունի ավելի քան 130 աշխատակից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում ընտրությունների դիտարկման ոլորտում առաջատար կազմակերպություն է: Ամեն տարի այն ղեկավարում և կազմակերպում է հազարավոր դիտորդների տեղակայում՝ գնահատելու համար, թե արդյոք ԵԱՀԿ տարածքում ընտրությունները իրականացվել են ԵԱՀԿ պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների համար միջազգային այլ չափանիշներին և ազգային օրենսդրությանը համապատասխան: Նրա եզակի մեթոդոլոգիան հնարավորություն է ընձեռում խորությամբ ուսումնասիրել ընտրական գործընթացներն իրենց ամբողջականությամբ: Աջակցության ծրագրերի միջոցով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը օգնում է անդամ երկրներին բարեփոխել իրենց ընտրական համակարգը:

Գրասենյակի **ժողովրդավարացման** միջոցառումներն ընդգրկում են՝ օրենքի գերակայություն, իրավական աջակցություն, ժողովրդավարական կառավարում, միգրացիա ու տեղաշարժման ազատություն և գենդերային հավասարություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը տարեկան իրականացնում է մի շարք նպատակային աջակցության ծրագրեր՝ ցանկանալով զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը աջակցում է նաև անդամ երկրներին կատարել իրենց պարտավորությունները՝ զարգացնելու և պաշտպանելու **մարդու իրավունքները** և հիմնարար ազատությունները՝ ԵԱՀԿ մարդու իրավունքների պարտավորություններին համապատասխան: Դա նվաճվում է տարբեր գործընկերների հետ աշխատանքով՝ համագործակցությունը ուժեղացնելու, հնարավորություններ ստեղծելու համար և թեմատիկ ոլորտներում փորձաքննություն տրամադրելով, ներառյալ ահաբեկչության դեմ պայքարում մարդու իրավունքները, թրաֆիքինգի գոհերի մարդու իրավունքների

պաշտպանության ընդլայնումը, մարդու իրավունքների ուսուցումը և վերապատրաստումը, մարդու իրավունքների դիտարկումը ու զեկուցումը և կանանց իրավունքները և պաշտպանությունը:

Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտներում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը անդամ երկրներին տրամադրում է աջակցություն՝ ուժեղացնելու աստելության հիման վրա հանցագործությունների և ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմինիստականության և անհանդուրժողականության այլ դեպքերի դեմ պայքարը: Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ միջոցառումները կենտրոնացած են հետևյալի վրա՝ օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, դիտարկում, զեկուցում և աստելության հիման վրա հանցագործություններ և դեպքերի դեմ քայլերի հետևողականություն, ինչպես նաև հանդուրժողականությունը, հարգանքը և փոխըմբռնումը բարձրացնող կրթական միջոցառումներ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն անդամ Երկրներին խորհրդատվություն է տրամադրում իրենց «Roma and Sinti» վերաբերյալ քաղաքականությունում: Այն աջակցում է «Roma and Sinti» համայնքների միջև կարողությունների կառուցմանը և համագործակցությանը, և խրախուսում է «Roma and Sinti» ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականություն մշակող մարմիններում:

ԺՀՄԻԳ բոլոր միջոցառումներն իրականացվում են ԵԱՀԿ անդամ Երկրների սերտ համաձայնեցման և համագործակցության, ԵԱՀԿ կառույցների և ոլորտային աշխատանքների միջոցով, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների հետ:

Ավելի մանրամասն տեղեկատվություն հասանելի է ԺՀՄԻԳ կայքում (www.osce.org/odihr).